

ԱՐԵՎԱԿԱՌԱՂՁ
ԿՅԱՆՔԻ—ՀԱՄԱՐ

Ա. Մ. ՇՈՒՍՏԵՐ

Հ
ՂԻ
ԿՆՈՋ

ՀԻՔԻԵՆԱՆ

ԵԶՈՎ-ՍԵՎԺՈՎՅԱՆ ՑԵՐԿԵՆԻՆ ՀՐԵՏԱՐԿԶՈՒԹՅՈՒՆ—1935

ԱՐՇԱՎ ԱՌՈՂՁ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

613.39

2-88

us

Ա. Մ. ՇՈՒՍՏԵՐ

ՀՂԻ ԿԵՈՉ ՀԻԳԻԵՆԱՆ

Կրճատումներով թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

3964
1008
38096

ԱՉՈՒՄԻՆՈՒՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Թառաղ-Դոն — 1935



ՀԴԻՈՒԹՅՈՒՆ

Հղիութիւնն կոչվում է կանացի որգանիզմի այն վիճակը, վոր տեւում է բեղմնավորման սկզբից մինչև ծննդաբերութիւնը, լինի այդ բնական կամ արհեստական ճանապարհով: Նորմալ ընթացք ունեցող հղիութիւնը տեւում է 280 որ կամ լսնական (մանկաբարձական) 10 ամիս, այսինքն 40 շաբաթ, հաշվելով վերջին ամսականից (դաշտանից): Այն հղիութիւնը, վոր վերջանում է դեռ 28 շաբաթ* չանցած, կոչվում է վիժում (աբորտ), 28 շաբաթ տեւողը — վաղահաս ծննդաբերութիւն, իսկ պտուղը՝ վաղածին (որպակաս):

Այսպես ծնված պտուղի կենսունակութիւնն աննշան եւ Ավելի կենսունակ է լի-

* Շաբաթն այստեղ պետք է հասկանալ 7 որ:

նում պտուղը հղիության 32 շաբաթից հետո։
Հղիության 40-րդ շաբաթը տեղի ունեցած
ծննդաբերությունը կոչվում է ժամկետային,
իսկ պտուղը՝ հասուն, ժամկետածին։ Յեթե
յերեխան ծնվում է ժամկետից մի-յերկու
շաբաթ առաջ, այդ հանգամանքն առանձին
նշանակություն չունի մանկան որգանիզմի
համար, և յերեխան կարող է համարվել հա-
սուն, այսինքն ժամկետածին։ Հղիության
ժամկետը վորոշելու խնդրում՝ յերեխայի
յերկու շաբաթ առաջ կամ յերկու շաբաթ
հետո ծնվելը սխալ չպետք է համարվի։

Սակայն լինում են դեպքեր, յերբ հղիու-
թյան ժամկետը շատ է յերկարում։ Թեև
մեկ կամ յերկու ամսով վաղ ծնվածների
քաշը փոքր է լինում, բայց նրանք շատ
անգամ կենդանի յեն մնում և նույնիսկ խոր
ծերության հասնում։ Հարկավոր է ամենա-
ուշադիր վերաբերմունք ցուցաբերել դեպի
վաղածին մանուկները։ Նրանց համար չա-
փազանց կարևոր նշանակություն ունի ծծով
կերակրելը և տաքության մեջ պահպանելը։
դրա համար կիրառում են ջեռակներ
(զրելիկ) կամ տաք ջրով լցված ուտիլնե
փափուշաներ ու շշեր։ Նույն նպատակի հա-
մար կան հատուկ պատրաստված փոքրիկ

վաննաներ — ջեռակներ՝ կրկնակի պատով,
վորի մեջ տաք ջուր են ածում։ Շշեր կամ
ուտիլնե փափուշաներ գործածելիս՝ պետք
է ուշադիր լինել, վոր նրանց բերանը լավ
խցված լինի։ Ինչպես արդեն հիշեցի, վա-
ղածին ծնունդների հակառակ՝ կարող են
պատահել այնպիսի դեպքեր, յերբ հղիու-
թյունը շատ տևական է լինում, այսինքն
քաշում է մինչև 320 որ՝ վերջին ամսակա-
նից հաշվելով, ընդվորում հաճախ մանուկ-
հսկաներ են ծնվում։

Հասուն պտուղի միջին քաշն է՝ տղանե-
րինը — 3330 գր, աղջիկներինը — 3220 գր։
Յերկարությունը — 50 սմ։

Կինը հղիանալ կարող է իր սեռական
կյանքի ամբողջ ընթացքում՝ սկսած առա-
ջին դաշտանից մինչև նրա վերջանալը, այ-
սինքն ամենամատաղ հասակից մինչև ծե-
րության մոտենալը։ Բայց պատահում են
հղիության դեպքեր աղջիկների մեջ՝ 9 տա-
րեկանից մինչև 13 տար։ հասակում և կա-
նանց մեջ՝ 50 — 55 ու նույնիսկ մինչև 70
տար։ հասակում։

Նորմալ (ընտրություն) մի կապություն
է հղիությունը կնոջ համար, վոր իրագոր-
ծում է կանացի որգանիզմի նորմալ (ընտ-

խոսական) խնդիրը, Հղիությունը դառնում է հիվանդություն միայն այն ժամանակ, յերբ նա շեղվում է իր սովորական ընթացքից: այս դեպքում յերևան են գալիս հիվանդության այս կամ այն նշանները, վոր սկսում է զգալ ծանրած (հղի) կինը, կամ թե չե՝ բժիշկն է անկանոնություններ գտնում հղի կնոջ կամ պտուղի մեջ՝ վերջինիս զարգացման կամ դիրքի նկատմամբ:

Ծննդաբերությունից հետո կնոջն ասում են ծննդկան: Սովորաբար ընդունված է ծննդկան ասել կնոջն այն ժամանակաշրջանում, յերբ նա ծնելուց հետո պառկած է մնում, ինչպես նաև վոտքի յեկներուց հետո առաջին որերում: Փաստորեն նա ծննդկան պետք է համարվի մինչև նոր ամսականի յերևան գալը, վոր լինում է վեց շաբաթից:

Այս ժամանակաշրջանում կինը պետք է կանոնավոր կյանք վարի, սեռական հարաբերություն չունենա ու խստիվ հետևի այն խորհուրդներին, վոր տալիս է բժիշկը թե ծննդկանի իրեն և թե մանկան խնամքի նկատմամբ, վորովհետև ուժեղի դեմ արված մեղանշումները կարող են լուրջ հետևանքներ ունենալ ինչպես մոր, այնպես էլ մանկան համար:

Հղիությունը հետևանք է բեղմնավորման, այսինքն մի այնպիսի պրոցեսի, յերբ ամորթիքի արտադրած արական սաղմնաթելիկը մտնում է՝ ձվարանի արտադրած՝ կնոջ ձվի մեջ: Այս պրոցեսը հասկանալու համար հարկավոր է ծանոթանալ կնոջ սեռական օրգանների կազմությանը:

Կնոջ արտաքին սեռական օրգանները վերևում հասնում են մինչև ցայաբլրակը (ճակատիկը), ներքևում՝ մինչև շեքը, իսկ յերկու կողմերից՝ մինչև սեռական մեծ շրթները: Ցայաբլրակն ամբողջ ծածկված է խիտ մազերով, վորոնք տեղավորված են ցած յեռանկյան ձևով՝ հիմքը դեպի վեր դարձրած (տղամարդկանց մոտ ցայաբլրակի վրա մազերը ումբի (հավասարակողմ շեղանկյունի) ձևով են, սրանկյունը դեպի պորտը դարձրած): Սեռական մեծ շրթները նման են յերկու գլանիկների, վորոնք ներքևում միանում, զոդվածք են կազմում: այս զոդվածքի (սպայկա) և սրբանի մեջտեղում գտնվում է շեքը: Վերևում, սեռական մեծ շրթների մեջտեղ, դուրս են ցցվում փոքր շրթները՝ բավականաչափ բարակ, նուրբ,

փափուկ ծալքեր: Նրանք լինում են տարբեր չափի և յերբեմն շատ մեծ:

Փոքր շրթները վերի կողմում յերկու մասի յեն բաժանվում, ընդվորում բաժանման ներքևի մասը կլիտորին է, միանում: Կլիտորից ցած՝ միզանցքն է, ավելի ցած՝ հեշտոցի անցքն է, վոր կույսերի մոտ ծածկված է տարբեր ձևի մոտ թաղանթով՝ այսպես կոչված կուսական թաղանթով: այս թաղանթի մեջտեղում կա մի ճեղք, վորտեղից արտահոսվում են ամսականը և այլ արտազատումներ: Առաջին իսկ հարաբերություն ժամանակ այս թաղանթը պատառվում է, ընդվորում ցավ է զգացվում, և աննշան քանակությամբ արյուն է գալիս:

Այստեղ պեսք է հիշատակել, վոր լինում են դեպքեր, յերբ կուսական թաղանթը առաջին հարաբերություն ժամանակ չի պատառվում, այլ միայն ձգվում է, ու վոչ ցավ է զգացվում և վոչ ել արյուն է յերեվում: Պատահում են նաև այնպիսի դեպքեր, յերբ յերեխա յեն ծնում՝ առանց կուսական թաղանթը պատառվելու, թաղանթը չի պատառվում նույնիսկ յերեխայի ծնվելու պահին, այլ միայն ձգվում է:

Կույսերի և ամուլ (տղա չբերած) կա-


նանց հեշտոցի մուտքը բավական ամուր փակված մի ճեղք է, իսկ ծնածնների մոտ այդ ճեղքը միքիչ բացված է:

Հեշտոցը մի խողովակ է, վորը միացնում է արտաքին և ներքին սեռական որգանները: Սեռական ճեղքի մոտ սկսվելով՝ հեշտոցը վերջանում է արգանդավզի մոտ, շուրջանակի ընդգրկելով նրան նրա ներքին խոռոչի բնագավառում և առաջացնելով առջևի, յետևի ու յերկու կողմնային կամարներ, ընդվորում յետևի կամարն առջևինից ավելի խոր: Նորմալ վիճակում հեշտոցի առջևի և յետևի պատն առջևինից յերկար է:

Ներքին սեռական անդամներին պատկանում են՝ արգանդն իր հարակից մասերով, ֆալլոպյան խողովակներով և ձվարաններով:

Արգանդը, վոր ծառայում է իբրև պտուղի զետեղարան, տանձի ձև ունեցող մի սնամեջ մարմին է: Նրա ներքևի անկյունում կա մի անցք, վոր արգանդաբերանն է կոչվում և տանում է արգանդավզի բերանը: Արգանդավզն իսկապես արգանդի շարունակությունն է և ցցված է հեշտոցի մեջ: Արգանդավզը լինում է տարբեր ձևի, վոր կախում ունի նախկին ծննդաբերություն-

ներից, փնասուռներից և հիվանդութիւններէ-
րից: Արգանդավզի այն մասը, վոր գտնվում
է հեշտոցի վերևում, վորովայնային խոռոչում,



Նկար 1. Կնոջ ներքին սեռական մասերը՝ դիտված յետևի
կողմից. 1 — արգանդի հատակը, 2 — արգանդավիղը, 3 —
նրա հեշտոցային մասը, 4 — արտաքին արգանդաբերանը,
5 — արգանդավզի հեշտոցային մասի առջևի պատը, 6 —
ձվատար փողը, 7 — նրա ծոցավոր ծայրը, 8 — ձվարանի
ծոցիկը, 9 — ձվարանը, 10 — յինթաձվարանը, 11 — կլոր
կապանը, 12 — լայն կապանը, 13 — բջջանյութը:

կոչվում է արգանդավզի վերհեշտոցային
մաս: Արգանդավզի բերանը, իր արտաքին
անցքով, գտնվում է հեշտոցում. դրա համար
է, վոր հեշտոցի պարունակութիւնը վորոշ


դեպքերում կարող է արգանդավզի բերա-
նով արգանդն անցնել: Հենց այս անցքից է,
վոր հեշտոցն են թափվում ամսականները և
արգանդի այլ արտադատութեանը, Կույսերի և
ամուլ կանանց արտաքին արգանդաբերանը
կլոր ձև ունի, այն ինչ ծնածներինը՝ ճեղքի
ձև, հաճախ անկանոն յեղբերով, վոր հետե-
վանք է այն պատուվածքներին, վորոնք ծնըն-
դաբերութիւնի ժամանակ առաջանում են
արգանդավզի վրա:

Արգանդի առջևը գտնվում է միզապարկը,
իսկ հետևում՝ ուղիղ աղիքը: Նորմալ ար-
գանդը պետք է առջև թեքված լինի: Նրա
մյուս գիւղերը, յեթե նրանք մնայուն են և
վոչ պատահական, կոչվում են պատուղգիկ
(ախտաբանական) դիրք: Չափազանց լցված
միզապարկը կամ ուղիղ աղիքն ազդում են
արգանդի դիրքի վրա և անկանոն դիրք են
տալիս նրան, ինչպէս այդ յերևում է 2 և
3 նկարներում: Չափազանց լցված միզա-
պարկը կարող է շատ վեր մղել արգանդը:
Դրա համար է, վոր յուրաքանչյուր ոպերա-
ցիայից առաջ պարպում են միզապարկը և
ուղիղ աղիքը: Նույնը պետք է անի յուրա-
քանչյուր կին, վոր գնում է մանկաբարձ —
գինեկոլոգի (կանացի հիվանդութիւններ

մասնագետի) մոտ՝ հետադննդության յենթարկվելու, վորովհետև՝ միզապարկի կամ ուղիղ աղիքի գերլցման պատճառով՝ յերբեմն անկարելի յե լինում հեշտոցի միջով հետադննդում կատարելու:



Նկ. 2. Արգանդի դիրքն ու ձևը նորմալ պայմաններում. 1 — արգանդը, 2 — միզապարկը:



Նկ. 3. Արգանդի դիրքը միզապարկի գերլցման ժամանակ. 1 — արգանդը, 2 — միզապարկը:

Արգանդի խոռոչի վերին յերկու կողմնային անկյուններում կան անցքեր, վորտեղից դեպի յերկու կողմն են ուղղվում Ֆալլոպյան կամ, ինչպես նրանց անվանում են ըստ նրանց կատարած աշխատանքին, ձվատար փողերը: Այս բարակ փողերը մտնում են փորի խոռոչը ծոպավոր ձագարաձև խողո-

վակների ձևով. այդտեղ են գտնվում փողերի արտաքին կամ վորովայնային բացվածքները: Դեպի արգանդը տանող այդ բացվածքները կոչվում են փողերի ներքին կամ արգանդային անցքեր:


Ձվարանները ներկայացնում են նշաձև, փոքրիկ մարմիններ. նրանք գտնվում են Ֆալլոպյան փողերի վորովայնային ծայրերի հետևում: Ձվարանները կնոջ կարևորագույն օրգաններն են ու բացառիկ նշանակություն ունեն նրա համար. ձվարանների ֆունկցիայի (գործառնություն) հետ ե կապված ովուլացիան (կանացի ձվերի գոյացումը) և դաշտանը:

ԿԱՆԱՅԻ ՁՎԻ ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Տղամարդու սերմը իր մեջ պարունակում ե սերմաթելիկներ, վորոնք սպերմատոզոիդ կամ սաղմարջիջ են կոչվում: Նրանք կետաձև գլխիկով ու յերկար պոչով գոյացումներ են, վորոնք տեսանելի յեն միայն մանրադիտակով: Սաղմարջիջները չափազանց շարժունակ են:

Ձուն գոյանում ե կնոջ ձվարանում: Ձվարանի պատյանը պատուվելուց հետո, ձուն

փորի խոռոչն է ընկնում. այստեղ նրան
բռնում են ֆալլոպյան փողի ծոպավոր
ծայրերը և ձվատար փողով արգանդն են
տանում: Յեթե արգանդում տեղի չունենա
բեղմնավորումն, ապա ձուն արգանդից դուրս
է ընկնում և վռնչանում ե: Իսկ յեթե խո-



Նկ. 4. Սաղմնաթելիկներ:

ղովակի միջով տեղաշարժելու պահին նա
հանդիպի տղամարդու սաղմնաթելիկին, ու
այս վերջինը մտնի ձվի մեջ, այդ դեպքում
տեղի յե ունենում բեղմնավորումը, և բեղմ-
նավորված ձուն անցնում է արգանդը, ամրա-
նում է նրա պատին և շարունակում է աճել:

Հարաբերության ժամանակ, տղամարդու
սերմի հետ, հեշտոցն են թափվում նաև

սերմի մեջ գտնվող միլիոնավոր սաղմաթե-
լիկները, վորոնք բոլորն ել դեպի արգանդն
ու փողերն են ուղղվում. սակայն բեղմնա-
վորում է միայն այն սաղմաթելիկը, վորն
ամենից արագ է ընթացել և առաջինն է
հանդիպել իր ճամբին կնոջ ձվին: Սաղմնա-
թելիկը ձվի մեջ թափանցում է միայն
գլխով, իսկ պոչը կտրվում, ընկնում է:
Այդ ձվի մեջ, սովորաբար, ուրիշ սաղմա-
թելիկ չի կարող այլևս թափանցել: Բայց
յեթե ձվարանից դուրս յեկած յերկու ձուն
ել միաժամանակ բեղմնավորվեն, կամ յեթե
յերկու սաղմնաթելիկներ միևնույն ձվի մեջ
թափանցեն, ապա տեղի յե ունենում բազ-
մապտուղ հղիություն, գոյանում են յերկ-
վորյակներ և յերեքվորյակներ:

Յերբ բեղմնավորված կանացի ձուն ձվա-
տար փողով առաջանա դեպի արգանդի խոռո-
չը, ամրանա այնտեղ և շարունակի աճել,
ապա ուրեմն տեղի ունի նորմալ, արգանդա-
յին հղիություն: Իսկ յեթե ձուն կանգ առնի և
արգանդին չհասած՝ սկսի աճել, ուրեմն տեղի
յե ունեցել արտարգանդային հղիություն:
Սա շատ լուրջ բարդություն է ու բազմաթիվ
դեպքերում անհրաժեշտ է լինում ոպերացիա
անել և այն ել՝ հաճախ անհապաղ:

ՀՂԻՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԻ ԿՆՈՋ
ՈՐԳԱՆԻԶԱՄԻ ԿՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄՍԱԿԱՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Հղիությունն սկսվելու հետ միասին ար-
դյոք միշտ դադարում է դաշտանը (ամսա-
կանը)։

Ի՞նչ է դաշտանը։ Դաշտանն արյան այն
պարբերական արտադատումն է արգան-
դից, վորը նորմալ պայմաններում պար-
բերաբար կրկնվում է 28 ուր անցնելուց
ճշտիվ վորոշված ժամանակին։ Համարյա
ամեն կին, սակավ բացառությամբ, նույնիսկ
անգրագետ և որացուցիչ հետ ծանութու-
թյուն չունեցող կինը, սովորաբար գիտե իր
ամսականի ժամանակը և միշտ ել, համարյա
անսխալ, կարող է ասել՝ յերբ է սպասում
նրան։

Կնոջ կյանքում ամսականներն այն կա-
րևորագույն ցուցանիշներն են, վորոնք պատ-
կերացնում են վոչ միայն նրա սեռական
կյանքի պայմաններն, այլև ամբողջ որգա-
նիզմի կյանքը։ Իր առողջության մասին հոգ-
տանող կինը յերբեք չպետք է մոռանա (ավելի
լավ կանի, յեթե զրի) ամսականի սկիզբն
ու վերջը, նրա բնույթն ու առանձնահատ-

կությունը։ Բժշկի համար շատ կարևոր է
այդ իմանալը՝ վոչ միայն հղիության ժամ-
կետը վորոշելու համար, այլ նաև ախտաճա-
նաչման համար։

Յերբ կինը նկատի, վոր իր ամսականները
մի ինչ-վոր խաղ են խաղում ու կորցրել
են իրենց սովորական կանոնավոր բնույթը,
պետք է անմիջապես բժշկի դիմի, վորովհետև
դա նշան է, վոր ինչ-վոր հիվանդություն կա-
րող է սկսված լինել։

Աղջիկների ամսականն սկսվում է սովո-
րաբար 12—14 տարեկան հասակից. դա նշան
է, վոր որգանիզմի հասունացումն սկսվել է։
45 տարեկանի մոտ կամ զրանից մի քիչ ավե-
լի կամ պակաս տարիք ունեցող կանայք
ամսական ունենալուց դադարում են. այդ
դադարումը նշան է, վոր կանացի որգանիզ-
մի համար արդեն սկսվում է թառամելու
շրջանը։ Դաշտանի ժամանակամիջոցի ամ-
բողջ տևողության ընթացքում լինում են
այնպիսի շրջաններ, յերբ կինն ամսական չի
ունենում։ Ամսականների այդորինակ բա-
ցակալության պատճառներից առաջին տեղը
բռնում է հղիությունը և ծիծ տալը։ Հղիու-
թյունը սկսվելուն պես ամսականը դադա-
րում է։ Կան այնպիսի կանայք, վորոնք ամ-



սականների բացակայութիւնը «մըսելով» են բացատրում: Սակայն պետք է իմանալ, փոր մըսելը կարող է ազդել ամսականի վրա միայն այն ժամանակ, յերբ հիվանդացել եւ ամբողջ որգանիզմը, այդ դեպքում, այո, հիվանդութիւնն անդրադառնում եւ նաեւ սեռական որգանների դրութեան վրա:

Համենայն դեպս պետք է նկատի ունենալ, փոր արյան արտազատումն, այն ել միքանի անգամ, յերբեմն լինում եւ նաեւ այն ժամանակ, յերբ հղիութիւնն արդեն սկսվել եւ ճիշտ եւ, այս արյունոտութիւններն ամսականների բնույթ չեն կրում, բայց հաճախ շատ նման են նրանց: Շատ անգամ այս յերբութեան վրայ ղիտվում եւ այն կանանց մոտ, փորոնց հղիանալն առաջին անգամը չեւ: Այս կանանցից փոմանք, նկատելով իրենց մեջ փորոշ առանձնահատուկ յերեւոյթներ (սիրտ խառնել, տարտրինակ ցանկութիւններ), բոլորովին համոզված կերպով հայտարարում են, թե իրենք հղի յեն. նրանք նույնիսկ իրենց հղիութեան սկզբնավորութեան ժամանակն ել են փորոշում:

Հղի վիճակում յեղած արյունոտութիւնները կարող են խառնաշփոթել բոլոր ժամկետները եւ չափազանց դժվարացնել ծննդա-

բերութեան ժամանակի վորոշումը: Դեպի իրենց նվազ ուշադիր կանայք ուշադրութիւն չեն դարձնում ամսականների բնույթը փոփոխելուն, բժշկի չեն դիմում եւ միայն այն ժամանակ են համոզվում, թե իրենք հղի յեն, յերբ զգում են պտուղի լիադալը:

Ամսականների բացակայութեան մյուս պատճառը, բացի հղիութիւնից, ծիծ տալն եւ Սովորաբար ծննդաբերութիւնից 6 շաբաթ անցնելուց հետո յե առաջին անգամ յերբութում ամսականը: Սա նշանակում եւ, փոր հետծննդաբերական ժամանակաշրջանը բոլորովին վերջացել եւ, եւ արգանդն իր սովորական դրութեան մեջ եւ: Այդ ժամանակում կինն անպատճառ պետք եւ բժշկի դիմի ստուգելու համար, թե արդյո՞ք նրա որգանիզմում ամեն բան կարգին եւ: Յետեւ կինը չի կերակրում, ապա նրա ամսականները նույն ժամանակից կանոնավոր կերպով շարունակվում են: Իսկ յետեւ հա կերակրում եւ, այդ դեպքում ամսականները դադարում են, մինչեւ կերակրման շրջանի վերջը:

Վորպես կանոն՝ կարելի յե ասել, փոր ծիծ տալու պատճառով ամսականների բացակայութեան դեպքում հղիութիւն տեղի չի ունենում: Կան կանայք, փորոնք այնքան են հա-

վատացած, թե ծիծ տալը կազատի նրանց հղիանալուց, վոր քիչ ե մնում յերեխային կերակրեն մինչև 2 տարեկան հասակը և նույնխնայ ավելի. սրանով, ինարկե, շատ են վնասում իրենց առողջությանը: Հայտնի յեն դեպքեր, յերբ այդպիսի յերկարատե կերակրման հետեանքով ամսականները յերկար ժամանակ չեն յերևում, և այդպիսի կանայք ստիպված են յեղել հետո լուրջ կերպով բժշկվել: Ուստի՝ առանց բժշկի հատուկ կարգադրության՝ 10—12 ամսից ավելի հարկավոր չե կերակրել:

Սակայն կերակրելու ժամանակամիջոցում ամսականներ չունենալը լիակատար յերաշխիք չե հղիությունից զերծ մնալու: Դրա համար յերեխային կերակրող վորձառու կինը, հիմնվելով իր անձնական զգացումի վրա և միաժամանակ նկատելով իր կաթի պակասումը, զլխի յե ընկնում, վոր կարող ե հղիացած լինել և իսկույն բժշկի յե դիմում: Հետևաբար՝ յուրաքանչյուր կին, վոր կերակրում ե և ամսականներ չունի, պետք ե ամիսը մի անգամ բժշկի մոտ դնա՝ իր հղիությունը ժամանակին ճշտելու համար:

Կանացի սեռական օրգանների միջանի հիվանդությունների ժամանակ, մանավանդ

ծանր բորբոքման պրոցեսներից հետո, նմանապես արհեստական վիժման ուղեբացիայից հետո, յեթե այդ ուղեբացիայի ժամանակ չափազանց մեծ ջանքով ե կատարվել քերումը (այսպես կոչված «գերաքերումը»), ինչպես նաև սնունդը պակասելուց հետո, — դաշտանը չի յերևում ամիսներ շարունակ: Վերոհիշյալ հիվանդությունների կանոնավոր բուժումը և սննդի բարվոքումը նպաստում են ամսականների վերականգնմանը:

ԿԻՇԻ ԳԵՂՁԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Ստինքը (կրծքի գեղձերը) հղիության ընթացքում աստիճանաբար պնդանում ու մեծանում ե, ընդվորում այդ պնդացումն ավելի աչքի յե ընկնում ախ կանանց մոտ, վորոնք առաջին անգամն են ծնելու: Հղի կանանց պտուկները ձգվում, առաձգական են դառնում, ընդվորում միջանի անգամ յերեխա բերողներինը սովորաբար ավելի պինդ ե լինում: Պտուկներն, ինչպես նաև նրանց չորս կողմի բոլորակները, մաթ գույն են ներկվում, իսկ թխամաղներինը համարյա սևանում են: Յերբմի ժամկետից բավական վաղ արդեն կարելի յե պտուկներից դուրս մղել սպիտակավուն հեղանյութ, վոր դալ ե կոչվում:

Հղի կանանցից միքանիսի դեմքի մաշկը մուգ-դարչնագուլյն բծերով և ծածկվում. այս հանգամանքը շատ և անհանգստացնում նրանց: Սակայն այսպիսի բծերը վոչ մի վտանգ չեն ներկայացնում և ծննդաբերությունից հետո սովորաբար անցնում են:

Հղիության յերկրորդ կեսին, արգանդի մեծանալու և դրա հետևանքով փորովայնի պատերի ձգման կապակցությամբ, փորի մաշկի վրա յերևում են այսպես կոչված հղիության մուգ-վարդագուլյն կամ սպիտակ-կապտագուլյն սպիւններ: Ինչպես և դեմքի բծերն, այս սպիտակ շերտերը վտանգավոր չեն, ծննդաբերությունից հետո փոքրափոքր կորցնում են իրենց գունավորումը, դառնում են դժգուլյն, խորշոմում են ու մնում այդ վիճակում:

Պետք է նշել, վոր գեր կանանց մոտ սպիտակ շերտերն ավելի ուժեղ կերպով են արտահայտվում, քան նիհարների մոտ, բացի դրանից, գեր կանանց մոտ հղիության սպիւներ կարող են յերևել նաև նրանց ազդերի մաշկի և ստինքների վրա:

Հղի կանանց փորի մաշկի վրա միջին գծի ուղղությամբ (պորտից սկսած մինչև ամո-

թույրի ճակատը, վոր կոչվում է ցայլք կամ աստղկան ըլրակ), մի մուգ շերտ է առաջանում, վոր թխամազների մոտ սև գույնի յե փոխվում: Այս սև գիծը, ինչպես նաև հղիության սպիւնները, վոչ մի վտանգ չեն սպառնում և ծննդաբերությունից հետո սովորաբար գունատվում են:

Պորտի փոսիկը հղի կանանց մոտ աստիճանաբար լցվում է, և հղիության ութերորդ ամսի սկզբին պորտը հարթվում է. իսկ 10-րդ ամսի սկզբին, յերբ արգանդն արդեն ցածանում է, պորտը նորից է ցցվում:

ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԸ

Արգանդն, աստիճանաբար մեծանալով, հղիության յերկրորդ կեսից իր ծանրությամբ ճնշում է կանքի խոռոչի անոթները, վորի հետևանքով արյան շրջանառությունը ստորին վերջավորությունների յերակներում դժվարանում է: Սրունքի, յերբեմն ել ազդրի մաշկերի վրա յերևան են գալիս կապտագուլյն, գալարուն շերտեր (դոլեր), այսինքն՝ յերակներ: Յերբեմն ել, մանավանդ սրունքների վրա, առաջանում են մուգ-կապույտ հանգույցներ, վորոնք ժամանակ առ ժամանակ զգալի ցավեր են պատճառում:

Լայնացած յերակներն ու հանգույցները, վորոնք առաջացել են հղիության ընթացքում և ծննդաբերությունից հետո միքիչ պակասում են, հաջորդ յուրաքանչյուր հղիության հետևանքով մեծանում են ու յերբեմն այնպիսի խոշոր չափերի յեն հասնում, վոր պետք է լինում ոպերացիա անել: Յերբեմն լայնացած յերակներն ու հանգույցները սաստիկ ցավեր են պատճառում և ազատ շարժողությունը դժվարացնում: Այս ցավերը մեղմելու համար հանձնարարվում է, ըստ հնարավորության, հիվանդ վոտքը բարձր պահել, այսինքն՝ նստել մի աթոռի վրա և վոտքերը դնել մյուս աթոռին, վորքան կարելի յե քիչ ման գալ և վոտքի վրո կանգնել: Ոգտակար կլինի, առավոտները տեղից վեր կենալուց հետո, վոտքերը յերիզապնդել փափուկ բինտով՝ մասներից սկսած մինչև ծնկները, ընդվորում վարի մասը պետք է կապել ավելի ամուր, իսկ վնդքան վերև, այնքան թույլ, բայց այն հաշվով, վոր ման գալու ժամանակ յերիզակապը բռնվի ու չքանդվի: Ավելի լավ կլինի, յեթե միայն հնարավոր է, ռետինե գուլպա հագնել, վոր պինդ սեղմում է վոտքը: Յեթե լայնացած յերակներն և հանգույցները շատ ցավ են

պատճառում, ապա անհրաժեշտ է լինում ոպերացիա անել:

Յերակների լայնացումով տանջվող հիվանդների մոտ կարող են բարդություններ առաջանալ: Պատահում է, վոր հանգույցները պայթում են, և այն ժամանակ տեղի յե ունենում հանկարծական ու բավական ուժեղ արյունհոսություն: Այս դեպքում, մինչև բժշկի ոգնությունը, անհրաժեշտ է իսկույն մաքուր թաշկինակով, մարլայով կամ անձեռոցիկով ամուր սեղմել այն տեղը, վոր տեղից արյուն է հոսում, և պինդ կապել վոտքը, սակայն վնչ թմբեցնելու չափ պինդ: Այսպիսի արյունհոսությունները սովորաբար բարենաջող յեղք են ունենում: Չափազանց ծանր բարդություններ են առաջ բերում այն խոցերը, վորոնք գոյանում են նախկին յերակային հանգույցների տեղերի վրա: Այս խոցերը յերբեմն սաստիկ ցավեր են պատճառում, թույլ չեն տալիս վոտնաման հագնելու և ման գալու. այս խոցերը դժվար են բուժվում:

Հղի արգանդի մեծանալու կապակցությամբ՝ կոնքի անոթների նույնորինակ ճնշումների հետևանքով յերբեմն ուղիղ աղիքի յերակների ուռչում է առաջանում: Սրբա-

նից դուրս են ցցվում մուգ-կապույտ հանգուլցներ, վորոնք կոչվում են հեմորոյի ծծուկներ (մայասըլ)։ այս ծծուկները (շիշկաները) յերբեմն շատ մեծ են լինում և խիստ անհանգստություն են պատճառում կանանց թե հղիության ընթացքում և թե ծննդաբերության ժամանակ, ինչպես նաև ծննդաբերությունից հետո։ Կողքի վրա հանգիստ պառկելը, կապարաշուր պաղ թրջոց (պրիմոչկա) դնելը, թեթեւ դիետը (ուտելիքի պահեցողություն), ամեն տեսակ զրգռեցուցիչ սննդի և գինու հանդեպ ժուժկալությունը, մատուտակային փոշին՝ վորպես թեթեւ լուծողական — այս բոլորը նպաստում է ցավերի խաղաղվելուն։ Բայց ավելի անհանգստություն պատճառող դեպքերում պետք է բժշկի դիմել։

Յերբեմն հղի կանանց սրունքներն այտոււմ են (ուռչում են)։ Նրանք այդ նկատում են, յերբ վոտնամանը դժվարությամբ է հագնւրվում։ Մատուլ կոխելիս՝ այդ տեղում փոս է լինում, վորն իսկույն չի անցնում։ Այսպիսի այտուցների ժամանակ պետք է անմիջապես մեզն անալիզի տալ։ այնուհետեւ արդեն բժիշկը կորոշե, թե ինչ բնույթ է կրում այդ այտուցը, Յերբեմն փոքրիկ այտա-

ծություն (ուռեցք) նկատվում է հղի կանանց նաև կոճի մասում, վորն ինչպես և յերակների լայնանալուց առաջացած այտուցը, վտանգավոր չէ։ Բայց յեթե բժիշկը վորոշի, վոր այս այտուցները հետևանք են ներքին կարևոր որգանների հիվանդության, որինակ՝ սրտի կամ յերիկամուռների, ապա հղի կինն անպայմանապես կարիք ունի բժշկի ոգնության։ Հղի կանանց արտաքին սեռական որգանների այտուցները, վորոնք յերբեմն զգալի մեծության են հասնում, տեղական հիվանդություն չեն, այլ հետևանք այն հիվանդության, վորն առաջացրել է սրունքի և ազդրերի այտուցները, հետևաբար նույնպիսի ընդհանուր բժշկության պետք ունեն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԽԱՆԴԱՐՈՒՄՆԵՐԸ

Դեմքի փոքրիկ փքվածությունը, վոր դիտվում է հղիության վերջին շրջանում, ինչպես և մարմնի մի տեսակ տարտամությունը, յեթե միայն ուրիշ հիվանդություն չկա, կնոջը չպետք է անհանգիստ անեն՝ հղիության կանոնավոր ընթացքի դեպքում։ Սա հիվանդագին յերևույթ չէ։ ծննդաբերու-

թյունից հետո բավական շուտ ամեն բան կարգի յե ընկնում:

Շատ անգամ հղի կանանց անհանգստացնում ե սիրտխառնումը և փոխումը Փսխումը շատ չի տանջում և մի քանի ամսից հետո դադարում ե: Փսխելու ժամանակ հղի կանանց հանձնարվում ե ավելի հանգիստ լինել, քիչ ուտել, բայց ավելի հաճախակի. այս պայմաններում սնունդն ավելի հեշտությամբ ե մարսվում: Յեթե փսխումները համառությամբ շարունակվեն, ապա անհրաժեշտ ե բժշկի ոգնությունը (այս մասին ավելի մանրամասն կխոսենք հետո):

Հղի կանանցից վոմանք դանդաղում են ազդրերի ցավերից, վորոնք անցնում են ներքև և զգացվում են ամբողջ վորտքում: Այդ ցավերն, ըստ յերևույթին, նրանից են առաջանում, վոր մեծացած արգանդը զբաղում ե վորտքի խոշոր ներվերը: Թեև այս ցավերը յերբեմն շատ են նեղում հղի կանանց, բայց չափազանցության չեն հասնում և ծննդաբերությունից հետո իսպառ անհայտանում են:

Յերբեմն հղի կանայք հիվանդանում են ներվային սխառեմի զանազան խանգարումներով, վորոնք արտահայտվում են թուլությամբ, հոգնածությամբ, գլխապտույտով,

անտարբեր վիճակով, ուշագնացությամբ: Վոմանք տանջվում են անքնությունից, մյուսներն, ընդհակառակը, քնից աչք չեն բաց անում: Ընդհանուր առմամբ, այս բոլոր յերևույթներն ել անախորժ են հղիների համար, բայց բոլորովին սպառնական չեն ու, սովորաբար, ծանր ընթացք չեն ընդունում: Ծննդաբերությունից հետո այս դրությունն անցնում ե:

Հղիների մեջ կան այնպիսիները, վորոնք առատ թուր են արտադրում: Դա փաստակար չե, թեև բավական անախորժություն ե պատճառում հղի կնոջը: Բերնի հաճախակի վորոգումը յեռացրած ջրով, մանավանդ յեթե ջրի մեջ քիչ քանակությամբ մաքրած սոդա կամ տանին խառնված լինի (մեկ բաժակ ջրին $\frac{1}{4}$ թեյի գդալ յուրաքանչյուրից), զգալի թեթևություն ե պատճառում:

Հայտնի յե, վոր հղիները միշտ ցանկություն ունեն թթու և աղի ուտելիքի, ինչպես հարինգը (սեյոդկա), լոռամրգին (կլուկվա), աղ դրած վարունգը, թթու կաղամբը և այլն: Կան կանայք, վորոնց համար այս հանգամանքը շատ բնորոշ ե, և միայն այս նշանի վրա հիմնված նրանք արդեն իմանում են, վոր հղի յեն: Այսորինակ ձգտումը

դեպի աղին ու թթուն ցանկալի յերևույթ չե, հետևաբար հղի կինը մատնների արանքով չպետք է նայի դրա վրա: Անհրաժեշտ է ամեն ազդեցություն գործ դնել՝ բուրբուռ վիճակից հեռու պահելու համար հղի կնոջն այդ տեսակ ուտելիքներինց կամ, ըստ հնարավորության, սահմանափակել նրանց գործածությունը: Ձպետք է հղի կնոջն իսպառ զրկել այսպիսի համեմավոր ուտելիքներից, փորովհետև դա անբարենպաստ կերպով կանդրադառնանրա ներվային սխտեմի վրա: Սակայն, ճաշակի այս խեղաթյուրումը սովորաբար յերկար չի տևում և շատ անգամ դադարում է հղիության առաջին կեսի վերջին:

ՊՏՈՒՂԻ ԱՃՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐԳԱՆԻՓ
ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Արգանդն այն որդանն է, փորը հղիության ժամանակ չափազանց մեծ փոփոխումների յենթարկվում: Յեղ դա շատ բնական է, յեթե ուշադրության առնենք այն հանգամանքը, փոր արգանդում, գնդասեղի գլխի մեծություն ունեցող ձվից, գոյանում է յերեք, իսկ յերբեմն չորս կիլոգրամից ավելի քաշ ունեցող պտուղը:

Ավելի պարզ լինելու համար, առաջ բերենք միջանի թվական տվյալներ.

Արգանդը

Մինչև հղությունը		Հղության վերջում
Յերկարությունը	7 սմ	35 սմ
Լայնությունը	3,3 սմ	24 սմ
Հաստությունը	2,2 սմ	22 սմ
Մակերեսը	40 քառ. սմ	860 քառ. սմ
Տարողությունը	2 խոր. սմ	1088 խոր. սմ
Քաշը	35 գր	1000 գր

Այս թվերը ցույց են տալիս, թե քանի անգամ է մեծանում արգանդը հղության ընթացքում, այն է՝ յերկարությունը 5 անգամ, լայնությունը $7\frac{1}{2}$ անգամ և հաստությունը 10 անգամ: Նրա տարողությունը մեծանում է ավելի քան 500 անգամ, իսկ քաշը՝ համարյա 30 անգամ: Լիովին հասկանալի չէ, փոր արգանդի այսորինակ փոփոխումներն ու նրա այսպիսի աճումը չեն կարող ազդեցություն չգործել թե հարակից որդանների և թե փոշի որդանիզմի վրա:

Այս բոլոր փոփոխումներն առաջ են գալիս պտուղի աճման կապակցությամբ և կատարվում են ինչպես իհաշիվ արգանդի խոռոչի մեծանալուն, այնպես էլ իհաշիվ

դեպի աղին ու թթուն ցանկալի յերևույթ չե, հետևաբար հղի կինը մատների արանքով չպետք ե նայի դրա վրա: Անհրաժեշտ ե ամեն ազդեցություն գործ դնել՝ բոլորովին հեռու պահելու համար հղի կնոջն այդ տեսակ ուտելիքներինց կամ, ըստ հնարա. վորության, սահմանափակել նրանց գործածությունը: Չպետք ե հղի կնոջն իսպառ զրկել այսպիսի համեմավոր ուտելիքներից, վորովհետև դա անբարենպաստ կերպով կանգրադառնանրա ներվային սխտեմի վրա: Սակայն, ճաշակի այս խեղաթյուրումը սովորաբար յերկար չի տևում և շատ անգամ դադարում ե հղիության առաջին կեսի վերջին:

ՊՏՈՒՂԻ ԱՃՈՒՄԻՅ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐԳԱՆԿԻ
ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Արգանդն այն որդանն ե, վորը հղիության ժամանակ չափազանց մեծ փոփոխումների յե յենթարկվում: Յեվ դա շատ բնական ե, յեթե ուղադրության առնենք այն հանգամանքը, վոր արգանդում, գնդասեղի գլխի մեծություն ունեցող ձվից, գոյանում ե յերեք, իսկ յերբեմն չորս կիլոգրամից ավելի քաշ ունեցող պտուղը:

Ավելի պարզ լինելու համար, առաջ բերենք միջանի թվական տվյալներ.


Արգանդը

Մինչև հղիությունը	Հղիության վերջում
Ցերկարությունը . . . 7 սմ	35 սմ
Լայնությունը . . . 3,3 սմ	24 սմ
Հաստությունը . . . 2,2 սմ	22 սմ
Մակերեսը . . . 40 քառ. սմ	860 քառ. սմ
Տարողությունը . . . 2 խոր. սմ	1088 խոր. սմ
Քաշը . . . 35 գր	1000 գր

Այս թվերը ցույց են տալիս, թե քանի անգամ ե մեծանում արգանդը հղիության ընթացքում, այն ե՝ յերկարությունը 5 անգամ, լայնությունը $7\frac{1}{2}$ անգամ և հաստությունը 10 անգամ: Նրա տարողությունը մեծանում ե ավելի քան 500 անգամ, իսկ քաշը՝ համարյա 30 անգամ: Լիովին հասկանալի յե, վոր արգանդի այսորինակ փոփոխումներն ու նրա այսպիսի աճումը չեն կարող ազդեցություն չգործել թե հարակից որդանների և թե վողջ որդանիցմի վրա:

Այս բոլոր փոփոխումներն առաջ են գալիս պտուղի աճման կապակցությամբ և կատարվում են ինչպես իհաշիվ արգանդի խոռոչի մեծանալուն, այնպես ել իհաշիվ


նրա պատերի և առավելապես մկանային հյուսվածքների լայնանալուն ու արյունասար անոթների շատ զարգանալուն: Իսկ ինչ վերաբերում է հղի արգանդի աճմանը (նկար



Նկ. 5. Արգանդի հատակի մակարդակը հղիության տարբեր ամիսներում:

5 և 6), ապա նա, աստիճանաբար մեծանալով, լուսնային վեցերորդ ամսում հասնում է պորտին, ութերորդ ամսում բռնում է թրածի հավելվածին և պորտի մեջտեղը, իններորդ ամսում ուժեղ կերպով հենվում է

թրածի հավելվածին և ճնշում է սրտի դդալի վրա, իսկ տասերորդ ամսում ցածանում է մինչև ութերորդ լուսնային ամսի մակարդակը, և ճնշման զգացողությունն անցնում է:



Նկ. 6. Արգանդի հատակի մակարդակը հղիության 9-րդ և 10-րդ ամիսների վերջում:

Վերը նշված այս սահմաններն, իհարկե, մոտավոր են: Փորի ցած իջումը սովորաբար կանայք իրենք են նկատում, փորովհետև այդ ժամանակ շնչառությունն ավելի հեշտ է կատարվում և սրտի զգալի վրա ճնշման

դգացողությունն անցնում է: Ինչպես վերելում արդեն ասված է, նույն հանգամանքն ազդում է նաև պորտի դրության վրա. քանի դեռ արգանդն աճում է պորտից դեպի վեր, այս վերջինը զնայով ձգվում, տափականում է: Լուսնային ութերորդ ամսում պորտը դառնում է տափակ, հարթվում է, բայց յերբ լուսնային 10-րդ ամսում արգանդը ցածանում է, պորտը նորից է ցցվում: Այս նշանը նույնպես կարող է մասամբ ողնել՝ լուծելու համար այս խնդիրը՝ հղիության ութերորդ, թե տասերորդ ամիսն է: Հաճախ պատահում է լսել հղիների հայտարարություններն այն մասին, թե բժիշկը՝ հղիության ժամկետը վորոշելիս՝ սխալվել է: Դժգոհ են լինում մանավանդ բանվորուհիներն ու ծառայող կանայք, վորովհետև այս սխալների հետևանքով կրճատվում է նրանց դեկրետային արձակուրդը: Մի կողմ թողնելով սխալների այն դեպքերը, վորոնք միշտ և ամեն գործի մեջ էլ հնարավոր են, պետք է սակայն ասել, վոր հղիության և մանավանդ վերահաս ծննդաբերության ժամկետների վորոշումը մի հասարակ խնդիր չէ, վոր միանգամ ընդմիշտ սահմանված կանոններով պայմանավորված լիներ:

Այստեղ կարող են լինել խոշոր խոտորումներ, վոր անկարող է նախատեսել նույնիսկ ամենաբարձրորակ մանկաբարձ-բժիշկը: Յեթե համեմատաբար մեծ հավանականությամբ կարողանում ենք վորոշել հղիության 32 շաբաթը (աշխատավորուհիների արձակուրդի ժամկետը), ապա յերբեք չենք կարող ասել, թե ծննդաբերությունն անպատճառ 8 շաբաթից է լինելու. այդ վորոշումն անել կարելի չէ միայն յենթադրաբար: Կան հազարավոր թե պատահական և թե հղի կնոջ առողջության խանգարումների հետ կապված պատճառներ, վորոնք կարող են արագացնել ծննդաբերությունը ժամկետից առաջ: Բայց լինում են նաև այնպիսի դեպքեր, յերբ ծննդաբերությունն սկսվում է ժամկետից ուշ: Այս դեպքում նմանապես հնարավոր է կամ բժշկի սխալը՝ հղիության ժամկետը վորոշելում, կամ հղի կինն անկասկածորեն գերակրել է յերեխային արգանդում:

ԱՃՈՂ ԱՐԳԱՆԴԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՎՐԱ

Լուսնային 9-րդ ամսում է, վոր արգանդը հասնում է իր ամենախոշոր մեծությանը: Այսքան վեր բարձրացած արգանդը

բարձրացնում և սեղմում ե թորքերի ստորին մասերն ու փոքր ինչ մի կողմ ե տեղափոխում սիրտը: Դրանից կնոջ շնչառությունը դժվարանում ե, յերևան ե գալիս շնչարգելություն, ու միայն 10-րդ ամսում յերբ արգանդը ցածանում ե, հղի կինն ըսկսում ե ազատ շունչ առնել, վորովհետև թորքերի ու սրտի վրա յեղած ճնշումը դադարում ե:

Հղիության ժամանակ սիրտն ընդհանրապես ավելի լարված ե աշխատում, վորովհետև՝ արգանդի աճման կապակցությամբ՝ նրա արյունատար սիստեմն զգալապես մեծանում ե: Բացի դրանից, վորովհետև հղի արգանդը ճնշում ե գործում վորովայնի խոռոչի անոթների վրա, սիրտն ստիպված ե ավելի ուժգնորեն աշխատել, վորպեսզի կարողանա արյան ամբողջ մասսան առաջ քշել: Ուստի հղիության ժամանակ սիրտն առանձնապես կարիք ունի բժշկի ուշադրությանը:

Հղի կանանց յերիկամունքները մեծանում են, ուստի և ավելի զգայուն են դառնում հիվանդությունների հանդեպ: Կա նույնիսկ հատկապես ստեղծված անուն «հղիների յերիկամունք»: Յերիկամունքների այս հիվան-

դությամբ բռնված ե լինում հղի կանանց մոտ 2%-ը. այս հիվանդության ժամանակ մեզի մեջ սպիտակուց ե առաջանում. ծննդաբերությունից հետո հիվանդությունն անցնում ե բոլորովին: Սակայն պետք ե իմանալ, վոր հղիների յերիկամունքներն, ինչպես և նրանց սիրտը, առանձին հոգատարության պետք ունեն. չպետք ե մոռանալ, վոր յերիկամունքների լուրջ հիվանդությունը չափազանց վտանգավոր ե հղի կնոջ համար, ծննդաբերության ժամանակ: Դրա համար հղիության շրջանում պետք ե խուսափել այն ամենից, վորը կարող ե փնտաւար լինել յերիկամունքներին. անհրաժեշտ ե իհարկե հետևել մեզի դրությանը. առհասարակ հղի կանանց մեզի քանակն ավելանում ե, իսկ ինքը մեզը դառնում ե ավելի դժգույն:

Հղիներից միքանիսի փորը խանգարվում ե, այսինքն փորկապություն ե առաջ գալիս: Ճիշտ ե, փորոտիքը, վոր սահմանափակ շրջանում սեղմված չե, պակաս ե նեղվում աճող արգանդի ճնշումից: Այդ փորկապությունը կարող ե բացատրվել նրանով, վոր հղիության ժամանակ աղիքները ջլատ են լինում, այսինքն թույլ: Համենայն դեպս, լուծողական գործածել կարելի չե միայն

բժշկի կարգադրությամբ: Առանց վախի կարելի չե հոգնա դնել: Ծննդաբերությունից հետո փորի գործունեությունը վերականգնում ե:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՆԻ ԻՐԵՆ ՇՂԻ ԿԻՆԸ

ՀՂԻ ԿՆՈՋ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԵԺԻՄԸ (ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ)

Հղիացած կինը չպետք է հիմնովին փոխի իր կենցաղի սովորական յեղանակը. սակայն նա պետք է խույս տա արագ շարժումներից, հեծանիվով, ձիով կամ ցնցում պատճառող սայլով ման գալուց, պարելուց չափազանց մեծ ծանրություններ տանելուց, վորպիսի ծանրությունները, փորի մկաններին միջոցով, կարող են ճնշել արգանդը. բացի վերոհիշյալից, հղի կինը չպետք է փայտ ջարդի և ընդհանրապես պետք է խուսափի այն ամենից, վորը կարող է ցնցում առաջ բերել նրա որգանիգմում. իսկ այդպիսի ցնցումների հետևանքով կարող է հղիությունն ել ընդհատվել:

Բայց դա չի նշանակում, վոր հղի կինը ձեռքերը ծալած պիտի նստի: Ամենորյա ֆիզիկական աշխատանքը և՛ անհրաժեշտ ե և՛ ոգտակար: Տնային բոլոր սովորական աշ-

խատանքներն, ինչպես սենյակներ հավաքելը, լվացք անելը, հատակներ լվանալը և այլն հղի կինը կարող ե կատարել առանց վորևե մնասի իր առողջության համար: Այնպիսի աշխատանքն, ինչպես լվացքն ե և հատակներ լվանալը, հղիության 7—8-րդ ամիսներում արդեն հոգնեցուցիչ ե, և հղի կինը չի կարող անտարբեր լինել դեպի այս հանգամանքը, մանավանդ վոր նրա մեծացած փորն ել ուղղակի խանգարում ե այդ անելու: Այնուամենայնիվ նա կարող ե տան հատակը լվանալ հատակի խոզանակով կամ փայտի ծայրին լաթ փաթաթելով:

Հղիության առաջին 2—2^{1/2} ամիսը պետք ե հրաժարվել սեռական հարաբերություն ունենալուց, վորովհետե սաղմնաձուռն տակավին շատ թույլ ե ամրացած արգանդի պատին և սեռական հարաբերությունից կարող ե տեղից պոկվել, ու. այն ժամանակ վիժում կառաջանա: Այս ժամանակից հետո մոտավորապես մինչև 7^{1/2} ամիսը կարելի չե հարաբերություն ունենալ: Հղիության հետագա ժամկետներում հարկավոր ե խույս տալ սեռական հարաբերությունից, վորովհետև դիտված ե, վոր այդպիսի հարաբերություններից հետո ջրելի բացման

դեպքեր են յեղել ու հղիությունների ընդհատում:

Բացի դրանից, յեթե մինչև ծննդաբերությունը քիչ ժամանակ է մնացել, հարաբերությունը կարող է լուրջ վտանգ սպառնալ հղի կնոջը, վորովհետև դրանից կարող են սեռական ուղիները կեղտոտվել: Հայտնի յեն հետծննդական այնպիսի ծանր հիվանդություններ, վորոնք հետևանք են ծննդաբերությանից վոչ շատ առաջ հարաբերություն ունենալուն: Դրա համար մանկաբարձական հիմնարկներից շատերում ծնելու յեկած բոլոր կանայք պետք է հայտնեն՝ յերբ են ունեցել վերջին անգամ հարաբերություն, վոր և գրանցվում է մանկաբարձական թերթում:

Հղի կինը պետք է խուսափի այն բոլորից, ինչվոր կարող է փորի սաստիկ ցնցում կամ վորովայնի մկանների ճնշում առաջ բերել աճող արգանդի վրա: Հետևաբար հղի կինն ամենալուրջ կերպով պետք է բժշկի իր հազը, փորկապությունը և փորլուծությունը: Հղիության նորմալ ընթացքի համար հազը քսակար է այն պատճառով, վոր նա վորովայնի որգանների ցնցում է առաջացնում, իսկ դրա հետ միասին, վորովայնի մկանների ճնշումից,

հղի արգանդի ցնցում է առաջ գալիս: Այս հանգամանքը կարող է հղիության ընդհատում առաջացնել: Հարկավոր է զգույշ լինել նմանապես փորկապությունից, վորովհետև արտաթորության ժամանակ սաստիկ նքոցները վորովայնի մկանների կողմից արգանդի ճնշում են առաջ բերում, մի հանգամանք, վոր ամեն անգամ անպատիժ չի անցնում: Փորլուծությունը նույնպես կարող է անբարենպաստ ներգործություն ունենալ հղիության կանոնավոր ընթացքի վրա: Աղիքների ուժեղ շարժումները, վոր լինում են փորլուծության ժամանակ, կարող են մոտիկ գտնվող արգանդի կծկում առաջացնել, վորի հետևանքով սաղմնաձուռն սլոկվում, բաժանվում է տեղից: Փորկապությունը հարկավոր է բժշկել սիստեմատիկ կերպով:

Հայտնի յե, վոր հղիներից շատերը ծանր աշխատանքներ են կատարում իրենց տներում, հագում են, փորկապությունից ու փորլուծությունից նեղվում են, բայց և այնպես բարեհաջող կերպով լրացնում են իրենց հղիության շրջանը: Սակայն բոլոր կանանց որգանիզմները միատեսակ չեն: Հայտնի յե մի բացառիկ դեպք, յերբ մի հիվանդ հղի կին, ջերմային զառանցանքով բռնված,

դուրս ե թուշում յերկրորդ հարկից և չի վնասվում վոչ միայն ինքն, այլև հղիութիւնն ել չի խանգարվում: Մյուս կողմից, հայտնի յեն վոչ սակաւ աշխարհի դեպքեր, յերբ հղի կինը, մի փոքր սայթաքման հետեանքով, վտանգել ե իր հղիութիւնը: Պարզ ե, ուրեմն, վոր տարբեր կանայք տարբեր կերպով են տանում արտաքին ցնցումները: Կան հղիութիւններ, վորոնք կանոնավոր յեղանակով առաջ են գնում նույնիսկ արտաքին ուժեղ և սաստիկ ցնցումների դեպքում, և կան աշխարհի հղիութիւններ, վորոնք ընդհատվում են մինչև անգամ աննշան ցնցումներից: Յեւ վորովհետև կինը չի կարող նախատեսել իր վոր աստիճանի ապահովված լինելը հղիութիւնն ընդհատման տեսակետից, ապա ուրեմն անհրաժեշտ ե միշտ զգուշ լինել և հոգածու վերաբերմունք ունենալ դեպի հղիութիւնը:

ՄԱՆ ԳԱՂ ԹՆ՝ ՊԱՌԿՆԼ

Հղի կանայք ամենից առաջ հարցնում են, թե վորն ե լաւ՝ շատ ման դալը, թե շատ պառկելը: Այս մասին յերկու՝ իրար հակադիր՝ կարծիք կա: Վումանք յենթադրում են, վոր շարժումներն ընդհանրապես վնասակար

են հղի կանանց համար: Նրանց կարծիքով հղի կինն իր ուժերը պետք ե պահպանի ծննդաբերութիւնն համար, հետևաբար անհրաժեշտ ե, վոր նա շատ պառկի և լաւ ուտի: Մյուսներն այն կարծիքի յեն, թե պառկելը վնասակար ե, թե շատ պառկած մնալուց յերկունքը դժվարանում ե, հետևաբար հղի կինը պետք ե շատ վտառի վրա լինի, վոր պեսզի տղաբերքը շատ ցաւոտ չլինի:

Վերոհիշյալ յերկու կարծիքն ել միայն վնաս կարող են հասցնել հղի կնոջը: Վերելվում արդեն ասել ենք, վոր հղի կինը պետք ե վորոշ ֆիզիկական աշխատանք տանի Իսկ թե վոր նա միայն պառկի, նրա մկանները կդադարեն գործելուց, «կըթանան», այդ դեպքում, ծննդաբերութիւնն ժամանակ, կինն անկարող կլինի ուժեղ նքոցներ անել՝ յերկունքը թեթևացնելու համար: Այս դեպքում ավելի ծանր կլինի այն կնոջ վիճակը, վորը չափազանց առատորեն մնվելուց ճարպ ե կապել:

Նույնքան վատ ե դրութիւնն այն հղի կնոջ, վորը չափազանց շատ ե շարժողութիւնն մեջ լինում: Նրա մկանները զուր տեղը ավելորդ բեռնվածութիւն են կրում, վորից մշտական գերհոգնածութիւն ե առաջանում:

յերկունքի պահին այսպիսի հղին կարող ե
լինել թույլ, գերհոգնած և չունենալ այն
ուժը, վոր հարկավոր ե ցուցաբերել ծննդա-
բերության ժամանակ: Բացի դրանից, ան-
դադար շարժողության մեջ լինելը վատ ե
ազդոււմ սրտի վրա:

Հղի կանանց հանձնարարւում ե շարժո-
ղության մեջ լինել միայն ախջան, վոր նա
որական յերկու անգամ, $1\frac{1}{2}$ — 2 ժամ տե-
ւող զբոսանքի դուրս գա: Ընդվորում, իհարկե,
պետք ե ման գա առանց շտապելու, սովո-
րական քայլերով ու, հոգնելու դեպքում,
պետք ե հանգստանալ:

Մյուս կողմից ել, տնային աշխատանքնե-
րից հետո, համարձակ կերպով կարելի յե
միջիչ պառկել՝ հանգստանալու համար: Նոր-
մալ հանգստությունն, ընդհակառակը, ոգտա-
կար ե, վորովհետև դրա շնորհիւ հղի կնոջը
հաջողվում ե պահպանել իր ուժը և կայտա-
ռությունը: Հղի կանանցից միջանիսը կար-
ծում են, վոր շարժողության հետ կապված
տնային աշխատանքը կարող ե փոխարինել
զբոսանքին: Բայց այդ ուղիղ չե: Զբո-
սանքներն անհրաժեշտ են, վորովհետև այս
դեպքում շարժողությանն ավելանում ե
նաև թարմ ողի բարեբար ներգործությունը,

մի հանգամանք, վորի շնորհիւ սիրտն ավելի
լավ ե աշխատում, և քունը լինում ե հանգիստ:

Այսպիսով, չափավոր ֆիզիկական աշխա-
տանքը, վոր կատարվում ե հանգստության
ու չհոգնեցնող զբոսանքների հետ փոխառ-
փոխ, որվա լավադույն կարգավորանքն ե
հղի կնոջ համար:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՅԵՎ ՀՂԻՈՒԹՅՈՒՆԸ

Այն կարծիքը, թե հղի կինը չի կարող ֆիզ-
կուլտուրայով զբաղվել, արդեն հնացել ե.
հղի կինը վոչ միայն կարող, այլև պարտա-
կան ե զբաղվել ֆիզկուլտուրայով:

Աճող արգանդի ան ճնշումից, վորին յեն-
թարկվում են վորովայնի խոռոչի անոթները,
հղի կանանց մոտ նկատվում են այնպիսի
յերևույթներ, վորոնք նկարագրված են «Ար-
յան շրջանառության խանգարումների մա-
սին» գլխում:

Ֆիզկուլտուրական կանոնավոր մարզանք-
ների շնորհիւ հաջողվում ե առաջն առնել
կամ, համենայն դեպս, թեթևացնել հղի-
ության այս բարդությունները: Հղի կինը
կարող ե կատարել ամեն տեսակի մարզանք-
ներ, բացի որգանիզմի ցնցումներ առաջաց-
նող մարզանքներից: Զպետք ե, որինակ, ցատ-

կել, թափալգոր լինել, վազք անել տեղում
և այլն. հանձնարարելի չեն ձի հեծած կամ
հեծանիվով զբոսանքները: Իրանի կորացումը,
պարզումը և շրջումը թուլյաթրելի յե միայն
մինչև ութերորդ ամիսը: Ոգտակար ե պառ-
կած վիճակում վոտքերը դեպի վեր պարզե-
լու մարզանքներ կատարել: Հղի կինն, առ-
հասարակ, կարող ե անել առավոտվա ամ-
բողջ լիցքը (որինակ՝ այն լիցքը, վոր հա-
ղորդվում ե ռադիոյով):

Մինչև յերրորդ ամիսը պետք ե խուսա-
փել ամեն տեսակ մարզանքներից, վորով-
հետև այդ ժամանակամիջոցում սաղմաձուռն
դեռ թույլ ե կպած արգանդին, հետեաբար
կարող ե հղիության ընդհատում առաջանալ:
Լողացումը լավագույն առողջասրահական
միջոցառում ե, բայց լող տալ հղի կանայք
կարող են միայն հղիության առաջին կեսում,
ընգվորում, լող տալիս, չպետք ե խոր տե-
ղերը գնան, վորովհետև ջրի մեջ հեշտու-
թյամբ կարող ե վոտքերի մկանների կծկում
առաջանալ: Չպետք ե լողանալ ցուրտ ջրում,
ինչպես նաև ալեկոծության ժամանակ: Հա-
մենայն դեպս ոգտակար ե, յեթե լողացումը
կատարվում ե ափից վոչ հեռու, ծանծաղ
տեղում:

Բացի դրանից, պետք ե նշել, վոր ֆիզ-
կուլտուրական մարզանքները, ամրացնելով
հղի կանանց մկանները, վորոշ չափով թե-
թեացնում են ծննդաբերության ախտը (գոր-
ծողությունը):

Այստեղ ավելորդ չե հիշատակել նաև այն,
վոր ֆիզկուլտուրական մարզանքներն ոգ-
տակար են նմանապես ծննդաբերությունից
հետո, վորովհետև նրանք նպաստում են ար-
յան լավագույն շրջանառության և ամրաց-
նում են վորովայնի խոռոչի մկանները:

ՄԱՇԿԻ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ
ԽՆԱՄՔԸ

Հղի կինը պետք ե նախապատրաստի իրեն
ծննդաբերության, ինչպես մի լուրջ ուղերա-
ցիայի, վորպեսզի ծննդական սենյակի շնմբից
ներս անցնի բոլորովին մաքրված: Դրա հա-
մար, հղիության հենց առաջին որից, նա
պետք ե խնամքով հետևի մարմնի մաք-
րությանը: Պետք ե բաղնիք գնա կամ տանը
վաննա ընդունի շաբաթը մի անգամից վոչ
պակաս, իսկ վերջին ամիսը — շաբաթը յեր-
կու անգամ անպատճառ: Տաք բաղնիքում
լվացվել պետք չե: Վաննա ընդունելիս՝ չպետք
ե նստել ջրի մեջ, այլ վերցնել թասով ջուր

դատարկ վաննայի մեջ նստել ու լվացվել, ապա մաքուր ջրով ցայվել. այնուհետև վաննան լվանալ, լցնել գոլ ջուր (28°) և 8—10 րոպեյի չափ նստել մեջը: Ճաք վաննա չընդունել, ինչպես նաև յերկար չնստել վաննայում, վորովհետև կարող ե գլուխը պտտվել: Ծննդկախնամ հիմնարկ մտնելիս՝ ծննդկանը պետք ե սանմշակման յենթարկվի, այսինքն դուշ ընդունի և արտաքին սեռական որգանների մազերը սափրել տա:

Հղի կինը պետք ե իմանա, վոր նրա հետծննդական դրությունը շատ բանում կախված ե այն մաքրությունից, վորի մեջ պահել ե նա իր արտաքին սեռական որգանները: Արտաքին սեռական որգանները պետք ե պահվեն շատ մաքուր: Դրա համար, հղիության ամբողջ շրջանում, որը յերկու անգամ հարկավոր ե լվանալ այդ որգանները:

Թեև շատ հղիներ այդ պրոցեդուրն անում են, բայց հաճախ այնքան անկարգ յեղանակով, վոր ոգուտի փոխարեն կարող ե մնաս ստացվել, մաքրության փոխարեն — կեղտոտություն տարածվել: Այս լվացումը կատարելու ամենաընդհանրացած յեղանակն այս ե՝ թասի մեջ ջուր են ածում և լվանում են սեռական որգանը: Դա, իհարկե

միանգամայն անպետք յեղանակ ե, վորովհետև այդ դեպքում լվացումը կատարվում ե նույն ջրով, վորի մեջ արդեն լուծվել ե լվացված կեղտը, հետևաբար և մաշկը չի կարող մաքրվել: Մինչդեռ այդ լվացումը պետք ե այսպես անել: Նախ հարկավոր ե ձեռքերը մաքուր լվանալ, վերցնել մի կտոր բամբակ, գաղջ (գոլ) ջրով սապոնել այն, կկզել թասի վրա ու այդ բամբակով լավ լվանալ արտաքին սեռական որգանները, մինչեւ իսկ նրա բոլոր ծալքերը, այնուհետև սապոնը հանել Նամարխի սկահի (կրուժկա) ոգնությամբ կամ այլ կերպ լվանալով, ապա լավ չորացնել մաշկը, վորից հետո նորից ձեռքերը լվանալ: Այս պրոցեդուրի համար անհրաժեշտ ե յեռացրած ջուր գործածել: Սապոնը հանելու համար ավելի հարմար ե Նամարխի սկահը, միայն հարկավոր ե ոգտվել մեջտեղը մեկ ծակ ունեցող ապակյա մաքուր ծայրապանակով (նակոնեչնիկ):

ՀԱԻ ԿԻՆԸ ՊԵՏՔ ՈՒՆԻ՞ ՄԻՐԻՑՈՒՔ ՍՐՍԿԼԵԼՈՒ

Այս հարցը չափազանց կարևոր նշանակություն ունի: Շատ կանայք այնքան են ընտելացել սրսկման, վոր սրսկվում են ամեն ուր, ինչպես նաև հղիության ժամանակ:

Մինչդեռ հղի կի՛նն ամենևին պետք չունի սրսկման, յեթե հղիութիւնը կանոնավոր ե ընթանում: Այն աննշան արտադատութիւնները, վորոնք ուղեկից են հղիութեանը, վնասակար չեն և հետեւաբար սրսկման կարիք չկա: Բայց յեթե արտադատութիւնները վորոշ չափով վատորակ են, այդ դեպքում, բժշկի թույլտվութեամբ, մաքրութիւն պահպանելու նպատակով, կարելի յե սրսկվել բորաթթվի գաղջ լուծույթով (մեկ բաժակ յեռացրած ջրին՝ թեյի մի գլխով բորաթթու. մեկ անգամվա համար 5 — 6 բաժակից ավելի լուծույթ չվերցնել):

Սրսկվելիս պետք ե պահպանել հետևյալ կանոնները: Սրսկում անել հարկավոր ե անկողնում պառկած. անկողնի վրա փռվում ե մոմալաթ (կլեյոնկա), վորի վրա տեղավորվում ե թասը կամ ներքնադիր անոթը (պողկլաղնոյե սուղնո): Յեթե հարկավոր ե նստած սրսկվել ապա պետք ե իրանը միջիչ հետ ծռել: Սկահը (կրուժկան) կախված ե լինելու վոչ ավելի, քան 70 — 75 սմ բարձրութեան վրա: Ծայրապանակը պետք ե ապակե լինի (ուղիղ կամ կոր — միևնույնն ե), բայց անպատճառ միայն մեկ լայն ծակով

մեջտեղում. շատ ծակեր ունեցող ծայրապանակը դժվար ե մաքուր պահելը: Զուրը պետք ե անպատճառ յեռացրած լինի, գաղջ, բայց վոչ տաք: Սրսկումը չսկսած՝ հարկավոր ե ծայրապանակի ծորակը բանալ ու հեշտոցը մտցնել, յերբ արդեն հեղուկը դուրս ե թափվում: Ծայրապանակը մտցնում են մոտավորապես կես ցուցումատի խորութեամբ, հեշտոցի հետի ե վոչ առջևի պատի ուղղութեամբ: Յեթե մի բան խանգարում ե ծայրապանակի ներս մտնելուն, այդ դեպքում չպետք ե աշխատել զոռով ներս մտցնելու, այլ ընդհակառակը, պետք ե դուրս հանել նրան և ապա նորից, զգուշութեամբ, ներս մտցնել: Լավ կլինի, ծայրապանակի ծայրին յեռացրած բորային վազելին քսվի, — այն ժամանակ նա շատ հեշտութեամբ կմտնի: Յերբ սրսկումն արդեն մոտ ե վերջանալուն, հարկավոր ե սկահում միջիչ ջուր թողնել, այսինքն այնքան, վոր փոքր ինչ բարձր լինի այն ծակից, վորտեղից ջուրը հոսում ե, ծորակը փակել և ծայրապանակը դուրս հանել: Ծայրապանակը հեշտոցն ե մտցվում հեղուկն արդեն դուրս հոսած պահին, ինչպես և սկահի մեջ միջիչ ջուր ե թողնվում այն նպատակով, վոր հեշտոցի մեջ ոդ չանցնի, վորի

մաքրության մասին կարելի չե յերաշխավոր լինել:

Սրսկումից առաջ և հետո հարկավոր ե ձեռքերը մաքուր լվանալ. բացի դրանից, սրսկումից առաջ պետք ե արտաքին սեռական որդանները լվանալ, վորպեսզի սրսկման ժամանակ կեղտ չտարվի հեշտոցը: Ծայրապանակը գնելուց հետո, պետք ե յեռացնել, բայց՝ վորպեսզի չպայթի, պետք ե նախապես փաթաթել այն մարլայով կամ ուրիշ կտորով: Սկահը և ռետինը պետք ե լավ լվանալ, ապա մարլայի մեջ փաթաթել ու յեռացնել: Յուրաքանչյուր սրսկումից հետո պետք ե սկահը և ծայրապանակը տաք ջրով լավ լվանալ ու մաքուր պահել: Ծայրապանակը կարելի յե դնել բորային լուծույթի մեջ կամ պահել մարլայով փաթաթած, իսկ գործածությունից առաջ յեռացնել: Զգուշության տեսակետից յերբեք չպետք ե ոգտվել ուրիշի ծայրապանակով կամ իրանը տալ ուրիշ կնոջ:

Յերբ արտադատումները շատանան, դառնան ուտիչ, հոտ ունենան, ընդունեն կանաչ-դեղնավուն գույն, ապա անմիջապես պետք ե բժշկի դիմել:

Յեթե կինն ստիպված ե և՛ հոգնա դնել

իրեն և՛ սրսկում անել, ապա նա պետք ե իմանա, վոր այդ յերկու գործողությունները միևնույն սկահով կատարել չի կարելի: Հոգնայի համար պետք ե ունենալ ուրիշ անոթ — չորս բաժականոց սկահ, ռետինե փողակ (տրուբկա) իր ծորակով և կառչուկե, ապակիյե կամ ռետինե կարճ ծայրապանակ: Իսկ սրսկման համար պետք ե ունենալ վեց բաժականոց սկահ, իր առանձին սարքով: Իսկ յեթե բուժական նպատակով հարկավոր ե առատ սրսկումներ կատարել, պետք ե ունենալ 8 — 10 բաժականոց սկահ:

Յեթե հարկ լինի կլիզմայի և սրսկման համար գործածել միևնույն սկահը, ապա ամեն անգամ, կլիզմայից հետո, պետք ե անպատճառ յեռացնել ինչպես սկահն, այնպես ել ռետինն, իսկ կլիզմայի ծայրապանակը վոչ մի դեպքում չի կարելի սրսկման համար գործածել:

ՄԵԶԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Հղի կինն, ամիսը մի անգամից վոչ պակաս, պետք ե մեզը հետազոտման տա: Մեզը հավաքելու համար պետք ե պատրաստել մի անոթ, ուր և յերեկոյից մինչև առավոտ

կարիք զգալիս, միգեր: Հետազոտման մեզի մեջ անպատճառ լինելու յե նաև առավոտ-
յան մեզը: Յերբեմն, բժշկի կարգադրու-
թյամբ, հարկ ե լինում հավաքել ամբողջ
գիշերվա և ցերեկվա մեզը միասին: Կող-
մնակի վոչ մի առարկա չպետք ե լինի այն
ամանում, ուր մեզն ե հավաքված: Վոչ մի
դեպքում չի կարելի մեզը խառնել արտաթո-
րության հետ: Առավոտը, հավաքված մեզը
հարկավոր ե թափահարել, պարպել 100
գր պարունակող ($1/2$ թեյի բաժակի չափ)
շշի մեջ ու նույն առավոտը լաբորատորիա
տանել: Կարելի չե մեզը յերկար պահել, մա-
ղավանդ տաք տեղում, թե չե կիչանա: Այն
անոթը, վորի մեջ հավաքվում ե մեզը, նույն-
պես չպետք ե վառարանի մոտ կամ մի ու-
րիշ տաք տեղ դրվի. ամենահարմար տեղը
արտաքին պատի մոտ ե:

Ինչո՞ւ համար անհրաժեշտ ե պարբերա-
բար հետազոտել մեզը: Վերևում արդեն ասել
ենք, վոր հղի կանանց յերկամունքները յեր-
բեմն հիվանդանում են: Անհրաժեշտ ե այս հի-
վանդությունը ժամանակին նկատել, վոր-
պեսզի անմիջապես միջոցներ ձեռք առնվեն
նրա լուրջ բուժման համար: Հղի կանանց
յերկամունքների հիվանդության առկայու-

թյունը կարող ե ծառայել վորպես հիմք, թե
ծննդաբերության ժամանակ միանգամայն
հնարավոր ե յերևան գալն այն ամենալուրջ
բարդության, վոր կոչվում ե եկլամպսիա,
այսինքն՝ նվաղման նոպաներ (պրիպսիկի),
թրթփանք (սուղորոգա), ուշագնացության
հետ մեկտեղ: Այս բարդությունը չափազանց
վտանգավոր ե ինչպես մոր, այնպես ել յե-
րեխայի համար և կարող ե սպառնական լի-
նել նրանց կյանքի համար: Սյդպիսի նվա-
ղումներ կարող են տեղի ունենալ նաև ծնն-
դաբերությունից առաջ, վորոնք յերբեմն շա-
րունակվում են ծննդաբերությունից հետո
յել, իսկ յերբեմն նոր միայն սկսվում են
ծննդաբերությունից հետո: Այս հիվանդու-
թյունն առաջացնող բուն պատճառը դեռ
հաստատապես հայտնի չե, բայց անկասկած
ե, վոր յերկամունքների հիվանդությունն
ահագլին դեր ե խաղում: հետևաբար անհրա-
ժեշտ ե ամեն միջոց ձեռք առնել՝ յերկա-
մունքների հիվանդությունը ժամանակին
նկատելու և նրա զարգացումը կանխելու
համար:

Հիվանդ յերկամունքներ ունեցող հղի
կնոջը պետք ե նկատել վորպես մի հիվանդի,
վորը վորոշ չափով եկլամպսիայի սպառնա-

լիքի տակ ե գտնվում: Այդպիսի հղին պետք
 ե բժշկի խիստ հսկողութեան տակ լինի և
 կատարել նրա բոլոր խորհուրդները: Դրա հետ
 միասին շատ անհրաժեշտ ե լուրջ դիետ պահ-
 պանել (ուտել անալի բանջարեղեն-կաթնե-
 դեն կամ նուշնիսկ միայն կաթնեղեն): Այս-
 պիսի դեպքերում մեզը հարկավոր ե հաճախ
 հետազոտել՝ շաբաթը մի անգամ, իսկ յեր-
 բեմն նաև ամեն օր: Յեթե հաջորդական մի-
 քանի հետազոտումներից հետո բժիշկը հա-
 վաստիանա, վոր վտանգն անցել ե, թույլա-
 տրում ե դիետի մեջ փոփոխություն մտցնել:
 Վերևում ասված ե, վոր յերկամունքների
 հիվանդութեան առաջին նշաններից մեկը
 վոտքերի ալտուցն ե (ուռեցը): Հենց վոր
 հղի կինն այդպիսի ալտուցներ նկատի, պետք
 ե անմիջապես մեզը հետազոտման տա և
 բժշկի դիմի:

ՍՏԻՆՔՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Ստինքները (ծծերը) և պտուկները պետք
 ե հղի կնոջ հատուկ ուշադրութեան առար-
 կան լինեն, վորովհետև մայրական կաթը լա-
 վագույն սնունդն ե մանկան համար:

Ամենակարևորն՝ ստինքները մաքուր պահ-
 պանելն ե: Դրա համար հանձնարարվում ե

ամեն օր, քնելուց առաջ կամ առավոտը,
 կիսապաղ ջրով սապոնով լվանալ ստինք-
 ները: Լվացումը պետք ե կատարել անպատ-
 ճառ կիսապաղ ջրով, վորովհետև դրանից
 ստինքներն ավելի առաձգական են դառնում:
 Գաղջ կամ գոլ ջրից ստինքները թուլանում
 ու ջլատ են դառնում: Առողջապահական այս
 հասարակ միջոցառումների գործադրու-
 թյունն արդեն բավական ե, վոր ստինքները
 պատրաստ համարվեն կերակրելու համար,
 բայց վորպեսզի պտուկներն ավելի առաձ-
 գական լինեն ու ամուր և յերեխայի ծծե-
 լուց չճաքճվեն, լավ կլինի, հղիութեան յո-
 թերորդ ամսից սկսած, օրը 2 — 3 անգամ
 ողիով շփել պտուկները: Շփման համար
 չպետք ե անխառն սպիրտ գործածել: Յեթե
 դալը (առաջին կաթը) չորանալուց՝ պտուկի
 վրա կեղեր (քոսեր) գոյանան, դրանց վրա
 պետք ե միքանի օր շարունակ վազելինով
 մարլա դնել, իհարկե վազելինը փոխելով,
 մինչև քոսը չթափի, ու դրանից հետո միայն
 ողիով շփումը սկսել:

Հենց վոր ստինքի վրա յերևան պզուկ-
 ներ, ցաներ, մաշկի գրգռում, պետք ե ան-
 միջապես և խնամքով բժշկել դրանք, վորով-
 հետև այդպիսի հիվանդությունները կարող

են յերեխային կերակրելու արգելք հանդիսանալ:

Վորպեսզի ստինքները հղիության ժամանակ ավելի հանդիսա դիրք ունենան, անհրաժեշտ է ճուռճիկ (լիֆշիկ) գործածել: Ճուռճիկը պետք է այնպես կարված լինի, վոր շնչառությանը նեղությունն չտա: Նա չպետք է սեղմի ստինքներն, այլ միայն պինդ պահի ու վեր քաշի նրանք: Ստինքի բորբոքումով, վոր իսկապես կերակրող կանանց հիվանդությունն է, յերբեմն բռնվում են նաև հղի կանայք:

Հենց վոր յերևան ստինքի բորբոքման առաջին նշանները՝ ցավեր, կարմրություն, պնդություն, տաքություն, անհրաժեշտ է լիակատար հանգստություն տալ նրանց, սրբել կամ լայն յերիզով վեր քաշել նրանք, վրան պաղ լաթ կամ ավելի լավ է սառույցով փամփուշտ դնել և իսկույն բժշկի դիմել: Չնայելով ստինքի նկատմամբ տարված նախապատրաստական աշխատանքներին, կերակրելու ժամանակ պտուկների վրա յերբեմն ճաքճաքումներ են առաջանում: Այդ բանի վրա պետք է լուրջ ուշադրություն դարձնել և բոլորովին մաքուր պահպանել պտուկները, վորովհետև այդպիսի ճաքերից

կարող է վարակը ներս մտնել և ստինքի թարախոտ բորբոքում առաջացնել: Ճաքճաքումներ յերևալու դեպքում պետք է անմիջապես բժշկի դիմել, իսկ մինչ այդ՝ լավ կլինի ծիծ տալուց հետո ամեն անգամ զգուշաբար յող քսել ճաքած տեղերին: Ամենևին չի կարելի ամբողջ պտուկին յող քսել (գրգռում չառաջացնելու համար), այլ հարկավոր է շատ թեթև կերպով դիպցնել յողը միայն ճաքված տեղին, վրան դնել մարլայի կտոր և, վոր ամենագլխավորն է, պտուկը միշտ չոր պահել: Կերակրելուց առաջ սովորաբար պտուկները պետք է բորային ջրով լվանալ: Կերակրելու ժամանակ, ճաքճաքված տեղից յերբեմն կարող է արյուն գալ, բայց դա յերբեմնի համար ֆլասակար չէ, ու վերջն անցնելուն չի խանգարում: Յնթե ճաքվածքանցնելուն չի խանգարում են ու մեծ, լավ կլինի ները շատ ցավոտ են ու մեծ, լավ կլինի այդ ստինքով կերակրելն ընդհատել ու կաթը կթելով դուրս հանել:

Պետք է իմանալ, վոր մրսելուց ստինքի բորբոքում չի առաջանում: Բորբոքում առաջացնողն այն վարակն է (կեղտոտություն), վորը պտկի ճաքի միջով անցնում է ստինքի ներսը: Հետևաբար պետք է ստինքը մաքուր պահել, պտուկների վրա առաջ յեկած ճաք-

վածքները խնամքով բժշկել և ամեն անգամ, կերակրելուց առաջ, ձեռքերը լվանալ ու բորային ջրով պտուկները սրբել: Յեթե յերեսխայի բերանի խոռոչում հիվանդություն առաջանա, միայն բժշկի խորհրդով կարելի չե սրբել նրա բերանը:

ԲԵՐԱՆԻ ԽՈՐՈՉԻ ԽՆԱՄՔԸ

Բերանի խոռոչը պետք է մաքուր պահվի: Ամեն առավոտ-յերեկո անհրաժեշտ է ատամները մաքրել փոշիով (կամ պաստայով): Ուտելուց հետո պետք է ատամի խողանակով մաքրել բոլոր փշրանքները և լավ փողոցել բերանը: Գնդասեղով, պատառաքաղով կամ այլ առարկաներով ատամները փորել չի կարելի, փորովհետև դա չափազանց վտանգավոր է ատամների համար: Հղի կինն, ամիսը յերկու անգամից վոչ պակաս, գնալու չե ատամնաբուժի մոտ՝ ատամների կամ լնդերի ննարավոր հիվանդությունը կանխելու համար:

Բերանի խոռոչը մաքուր պահել և ատամները բժշկել նրա համար է հարկավոր, փորովհետև փտած ատամները կարող են ամբողջ որդախիզմի ծանր հիվանդությունների պատճառ դառնալ, հետևաբար և լուրջ բարդություններ առաջ բերել ծննդաբերական շրջանում,

Ս Ն Ո Ւ Ն Դ Ը

Հղի կնոջ սնունդը չպետք է գրգիռ առաջացնի վոչ ստամոքսում և վոչ յերկամունքներում: Ըստ վորում պետք է խույս տալ բոլոր սուր, թթու, աղի, ծխով սպիտած ուտելիքներից, ինչպես և մսից, գինուց, գարեջրից և այլն: Գլխավոր սնունդը պետք է լինի բանջարեղենը, կաշաները, ձկնեղենն, սպիտակ միսը և այլն: Բայց այդ չի նշանակում, վոր յեթե առողջ հղի կինը մի պանառ աղի ձուկ կամ սև միս ուտի, կհիվանդանա: Վոչ, հղի կինը կարող է թույլ տալ իրեն այդ, միայն չափավոր և վոչ ամեն օր: Սակայն վոչ մի դեպքում դա նրա հիմնական սնունդը չի կարող հանդիսանալ:

Լավ կլինի, յեթե սնունդը զանազանակերպվի, մի օր՝ կաթնեղեն, մյուս օր՝ ձրկնեղեն, յերրորդ՝ որը՝ սև կամ՝ ավելի լավ է՝ սպիտակ միս: Ղրանց հետ միասին նաև ամեն օր բանջարեղեն: Հղիության վերջին ամիսը հարկավոր է ավելի խիստ դիետ պահել ու մսեղեն լիսպառ չուտել:

Ինչպես վերևում ասվեց, հղիններից վոմանք, առաջին ամիսներում, շատ են նեղվում սիրտխառնումից և փսխումից: Հասարակ դեպքերում թե սիրտխառնումը և թե

փսխումը յենթարկվում են բուժական սովորական միջոցառումներին, և այսպիսի հղիների սննդառութունը ընթանում է միանգամայն բավարար յեղանակով: Սակայն լինում են դեպքեր, յերբ հղիները դժվարությամբ են տանում հաճախակի կրկնվող փսխումները, լզարում են. այս դրությունը սովորաբար շարունակվում է հղիության առաջին կեսում, իսկ այնուհետև այդ բոլոր յերևույթները խաղաղվում են, ու հղիները շուտով լավանում են: Նման դեպքերում ոգտակար է ուտել անկողնում, տեղից չվերկացած, և այնուհետև նորից պառկած մնալ յերկու ժամի չափ: Այսպես վարվելով կերածի մեծ մասը մարսվում է, և փսխումները դադարում են:

Բայց կան այնպիսի փսխումներ, վորոնց վրա վոչ մի միջոցառում չի ներգործում: Հղի կինը բոլորովին չի մարսում սնունդը, քամվում, հյուծվում է: Այսորինակ անընկճելի փսխումների դեպքում հղի կնոջ միակ փրկությունը՝ հղիությանն արհեստական յեղանակով վերջ տալն է: Այսպիսի ոպերացիայից հետո սովորաբար բոլոր յերևույթները շուտով խաղաղվում են, ու հիվանդի դրությունը, բավական արագ, բարվոքվում է:

Հղի կանանցից վոմանք, հավատացած լինելով, վոր խմելուց այտուցներ են առաջանում, վախենում են խմել, հետևաբար և չառաչար տանջվում են ծարավությունից: Առողջ հղի կանայք, չափավոր խմելուց, այտուցներ չեն ունենում: Հղի կինը կարող է խմել ինչքան վոր իր նորմալ սովորությունն է: Յեթե հղի կինը ծարավ զգա ու իր ծարավը հագեցնելու համար մի ավելորդ բաժակ հեղուկ խմի, այդ բանը նրան յերկյուղ չպետք է պատճառի: Հարկավոր է միայն հետևել, վոր հղի կնոջ արտադատած մեզի քանակը խմած հեղուկի քանակից քիչ չլինի, հաշվի առնելով իհարկե առատ քրտինքը և փորլուծությունը, յեթե դրանք տեղի յեն ունեցել: Իսկ յեթե հղի կինը նկատի, վոր իր մեզի քանակը նվազում է կամ, ընդհակառակը, սաստիկ շատանում է, մանավանդ այն դեպքում, յերբ չափազանց ախորժակ կամ չափազանց ծարավ է զգում, ապա անմիջապես սխտք է բավ է զգում, վորովհետև այդ յերևույթը բժշկի դիմի, վորովհետև այդ հղի կնոջ առողջենթադրել է տալիս, վոր հղի կնոջ առողջությունը խանգարված է և հարկ է անմիջապես միջոցներ ձեռք առնել:

Դեռ մինչև այժմ շատերն այնպես են համոզված, վոր գարեջուրը շատ ոգտակար է

հղի և մանավանդ կերակրող կանանց համար: Գարեջրից իբր թե նրանք գերանում են, և կաթն ել ավելանում է: Վոր գարեջուրը վորոշ չափով նպաստում է կաթի ավելանալուն, դա վիճարկության կարոտ չէ, վորովհետև յուրաքանչյուր խմված հեղուկ վորոշ աստիճանի նպաստում է մայրական կաթի շատանալուն: Բայց վոր նա հղի և կերակրող կանանց համար ոգտակար է, — դա մի անհիմն կարծիք է, նախապաշարմունք է: Գարեջուր և այլ վոգեկից ըմպելիքներ գործածելը ֆլաստում է վոշ միայն իրեն, մորը, այլև նրա մանկանը: Հետևաբար ինչպես հղիներն, այնպես և կերակրող մայրերը բացարձակապես պետք է հեռու պահեն իրենց ալկոհոլային խմիչքներ գործածելուց և կիրառեն դրանք բժշկի կարգադրությամբ բացառիկ դեպքերում միայն՝ իբրև դեղ:

ՎՈՏՆԱՄՈՒՆԸ

Հղի կինը մեծ ուշադրություն պետք է նվիրի իր վոտնամանին ու զգեստին: Նա պետք է հագնի ցած կրունկով վոտնամաններ: Ձմեռները լավագույն վոտնամանը թաղիքի կոշիկներն են (վալենկաներ): Խնշո՛ւ հղի կանայք բարձր կրունկով վոտնաման-

ներ չպետք է հագնեն: Պետք է իմանալ, վոր հղի կինը, մանավանդ վերջին ամիսներում ահագին ծանրություն է կրում մեծացող փորում, վոր առջև է ցցված: Հավասարակշռությունը պահպանելու համար այդ ծանրությունն ստիպում է նրան դեպի յետ թեքվել: Իսկ յեթե հղի կինը գործ է ածում բարձրակրունկ վոտնաման, ապա իր հավասարակշռությունը պահպանելու համար նա հարկադրված է լինում ավելի ևս յետ թեքվել, վորի հետևանքով հղի կնոջ առանց այդ ել անկայուն դիրքը դառնում է ել ավելի անկայուն: Դրա հետ միասին նրա քայլվածքն ել դառնում է պակաս հաստատուն և գայթեկն ու ընկնելն ավելի հնարավոր մի բան, վոր միշտ անպատիժ չի անցնում հղի կնոջ համար:

ՀԱԳՈՒՍՏԸ

Հղի կնոջ հագուստը չպետք է արգելք լինի նրա ազատ շնչառությանը և խանգարի փորի աճմանը: Ուստի հղի կնոջ համար ամենահիգիենիկ հագուստը ոռւսական սարահանի* ձևով կարված զգեստն է: Ընդհան-

* Սարահանը կարճ թևերով, գոտկատեղում բոլորովին արձակ ոռւս ժողովրդական մի զգեստ է, վոր բռնվում է ոռւսկապերով: Ծառ. քարգմ.

րապես, յուսկաներն ու վարտիքները չպետք
է սեղմեն փորը: Պետք է գործածել փակ,
առանց ճեղքի վարտիք: Ամբողջ հագուստն
իր ծանրութեամբ չպետք է նեղութիւն պատ-
ճառի հղի կնոջը, վոր առանց այն եւ ծան-
րաբեռնված է իր բեռնով:

Վերնագգեստը (վերարկու, մուշտակ)
պետք է լայն կարված լինի և վոչ մի դեպ-
քում փորը չսեղմի: Կան կանայք, վորոնք
այն կարծիքի յեն, թէ հղիութիւնից նրանց
իրանը տգեղանում է, դրա համար եւ սա-
տիկ սեղմում են փորը, վորպիսի հանգա-
մանքը կարող է չափազանց վնասել թէ հղի
կնոջը և թէ նրա պտուղին:

Հղի կինը կարիք չունի շատ զգեստների
մեջ փաթաթվելու. ձմեռվա հագուստը լինե-
լու յէ բավականաչափ տաք, բայց վոչ
ծանր:

ԳՈՒԼՊԱՅԱԿԱՊԵՐԸ

Գուլպաները թոկով կամ յերիզով կապե-
լու սովորութիւնը գուլպաներ պահպանելու
ամենափնասակար յեղանակն է: Վոմանք՝
յերիզի (տեսմա) փոխանակ՝ դործ են ածում
ռետինե կապեր. սրանք միւրիչ լավ են, բայց
նույնպէս վնասակար: Յերիզներն ու թոկերը,

ինչպէս նաեւ ռետինե բոլորակաձև գուլպա-
յակապերը (թեւ այս վերջինն առաջիննե-
րից վորոշ աստիճանի պակաս) վտառերը
սեղմելով՝ ճնշում են այն անոթները, վո-
րոնցով արյունն է հոսում. սեղմված տեղից
արյունը դժվարութեամբ է անցնում: Սիրտն
ստիպված է լինում ավելի ուժգնորեն աշ-
խատել, վորպեսզի նեղ անցքից առաջ մղի
արյունը: Դրանից հետևում է յերկու ան-
բարենպաստ մոմենտ. մի կողմից՝ միանգա-
մայն ապարդիւն կերպով հոգնում է սիրտը,
մայն անհրաժեշտ է պահպանել ծննդաբե-
ւութեան համար, մյուս կողմից՝ անցքը սեղմ-
ված լինելով՝ արյունն ավելի դանդաղորեն
է հոսում, և բավական մեծ ուժ է պահանջ-
վում՝ արյունն առաջ մղելու այն տեղում,
վորը գուլպայակապով է սեղմված: Դրա հե-
տևանքով անոթների պատերը, ճնշման
յենթարկվելով, ձգվում են ու անցկացնում
հեղանյութը, վորով և սրունքների վրա, գուլ-
պայակապերից ներքե, այտուցներ են առա-
ջանում: Սրունքներն ավելի հաստանում,
ուռչում են, ստանում են վողորկ փայլ և՝
շոշափվելիս՝ թվում են սառը: Յեթե այդպիսի
սրունքի մաշկը մատով հուպ տաս, կառա-
ջանա փոսիկ, վոր իսկույն չի անցնում:

Այսորինակ այսուցները վտանգավոր չեն. հենց վոր դադարեն այգպիսի սեղմող գուլպայկապեր գործածել, այդ այսուցները բավական շուտով անցնում են:

Ուրեմն ի՞նչ տեսակի գուլպայկապեր են գործածելու կանայք և մանավանդ հղի կանայք: Պետք է գործածել այնպիսի գուլպայկապեր, վորոնք սրունքը չեն սեղմում, շնչառությունը չեն զժվարացնում և արյան շրջանառությունը չեն խանգարում: Այս պահանջներին միանգամայն բավարարություն են տալիս ճռուճիկի (լիֆշիկ) կամ բանդաժի կշտերից կարված ռետինե կապերը, վորոնք մետաղե սեղմիչներով բռնում են գուլպաները: Կարելի չէ նմանապես պատրաստել կտորից կարած կամ ռետինե թեթե գոտիկ և կշտերից նույնպիսի ռետինե կարել: Այս բոլորը պետք է կարված լինի լայն ու արձակ, վորպեսզի ամենևին նեղություն չպատճառի հղի կնոջը:

Բ Ա Ն Դ Ա Ժ Ը

Աճող հղի արգանդը ներսից ճնշում է գործում վորովայնի պատի վրա և քաշում է նրա մկանները: Մկանների թուլացման առաջն առնելու և աճող արգանդի համար

գեթ մի փոքր նեցուկ ստեղծելու համար հանձնարարվում է 6-րդ ամսից, բժշկի կարգադրությամբ, բանդաժ հագնել:

Պետք է ընտրել այնպիսի բանդաժ, վոր լավ բռնի իրանը. բանդաժը պետք է կտորից կարված լինի՝ ռետինե մեջլիրներով. ցանկալի չէ՝ առանց վոսկրե կամ մետաղե շերտիկների, մանավանդ առջևից: Բանդաժը պիտի հասնի մինչև պորտը, լավ պիտի զրկի փորը, բայց առանց սեղմելու և ճնշելու: Նա չպետք է զժվարություն պատճառի քայլելու, այլ ընդհակառակը, հղի կինն ավելի հանգիստ է զգալու իրեն բանդաժով: Յեթե բանդաժն անհանգստացնում է և անհարմարություն է առաջացնում, նշանակում է՝ նա անպիտք է: Կնոջ նստած դիրքում բանդաժը չպիտք է հուպ տա կուրծք և զժվարացնի շնչառությունը:

Բանդաժը սովորաբար կապ է գցվում յետևից, իսկ յերբեմն նաև կողքից: Նրա յերկու կշտերից կարվում են ռետինե գուլպայկապեր: Վորպեսզի բանդաժը վերև չսահի, վորքերի արանքով, առջևից դեպի յետ, անցնում են կտորից կարած կամ ռետինե կոճկվող կապիչներ: Բայց սրանք չառանգվում հարում են մաշկը և անհանգստություն

են պատճառում: Կանոնավոր նստած բան-
դաժը, առանց հիշյալ կապիչներին ել, հաս-
տատուն ե լինում: Նույն բանդաժը, կարելի
յե գործածել նաև ծննդաբերությունից հետո՝
փոքրացնելով այն փորի շրջագծի համա-
ձայն:

Շատ հարմար ե գործած բանդաժը: Նա
խապառ նեղություն չի տալիս հղի կնոջը և
լավ ել պահպանում ե փորը:

Բանդաժն անհրաժեշտ ե մանավանդ այն
դեպքերում, յերբ, ինչպես ասում են, փորը
կախված ե: Այդպես ե լինում այն կանանց
փորը, վորոնք քանիցս ծնել են, ուշք չեն
դարձրել իրենց փորին ու, բացի դրանից,
ծանր ֆիզիկական աշխատանք են տարել
հղիության շրջանում: Կախված փորը կարող
ե պատճառ դառնալ պտուղի անկանոն դիր-
քին. այդ դեպքում պտուղը դտնվում ե այն
աստիճանի առաջ թեքված արգանդում, վոր
կարծես տեղից խախտված լինի: Այսպիսի
փորը ժամանակին պետք ե ապահովված
լինի բանդաժով: Դրանով պտուղի անկանոն
դիրք ստանալու հնարավորության առաջը
կանխվի: Բանդաժը պետք ե ազատորեն և
հարմար կերպով գրկած լինի փորը: Շանրած
փորի ճնշումը, սեղմումը չափազանց վնաս-

սակար ե թե մոր և թե նրա մանկան հա-
մար:

Պառկելիս՝ բանդաժը պետք ե հանել, իսկ ա-
ռավոտները՝ նորից հագնել՝ պառկած դիրքում:

ՀՂԻ ԿԻՆԸ ԿԱՐՈՂ Ե ԱՐԴՅՈՒՅ ԴԵՂԵՐ ԸՆԴՈՒՆԵԼ

Մինչև որս դեռ գոյություն ունի այն նա-
խապաշարումը, թե հղի կնոջ բժշկի դիմելն
ապարդյուն բան ե, վորովհետև նա «դեղեր
ընդունել չի կարող»: Թե վոր հղի կինը հի-
վանդանա, ապա նա կարող ե և պետք ե
բժշկվի այնպես, ինչպես և վոչ հղի կինը:
Հղի կինը կարող ե դեղեր ընդունել առանց
վորեն ֆնաս հասցնելու իր հղիությանը: Ար-
գանդի վրա ֆնասակար ներգործություն ու-
նեցող դեղերի թիվը շատ չե, և որգանիզմի
ընդհանուր հիվանդության դեպքում նրանք
կիրառվում: Ինչ վոր ֆնա-
սովորաբար չեն կիրառվում: Ինչ վոր ֆնա-
սակար ե մոր համար, ֆնասակար ե նաև
պտուղի համար: Այն դեղերը, վորոնք ըն-
դհանրում են հղիությունն ընդհատելու նպա-
տակով, շատ քիչ անգամ են արդյունք ու-
նենում, այն ել միայն այն ժամանակ, յերբ
թունավորող դեղեր են, վորոնք ֆնասակար
կերպով ներգործում են վորջ որգանիզմի,
հետևաբար և հղի արգանդի վրա:

Իսկ այն դեղերը, վոր տրվում են այլևայլ հիվանդությունների ժամանակ, հղի կինը կարող է ընդունել թե իր և թե պտուղի համար անփնտաս կերպով: Ըստ վորում հղիները բժշկվելուց յերկուդ չպետք է ունենան, Հիվանդանալու յուրաքանչյուր դեպքում նրանք անմիջապես պետք է դիմեն բժշկի՝ հիվանդությունը կանխելու համար:

ԿԱՐԵԼԻ՞ ՅԵ ԱՐԴՅՈՒՔ ՀՂԻ ԿՆՈՋՆ ՈՊԵՐԱՅԻՍ ԱՆԵԼ

Այս հարցը հաճախ է անհանդուստացնում հղիներին: Սակայն ոպերացիայի կարիք ունեցող հղի կինը պետք է ոպերացիայի յենթարկվի: Այսպես, որինակ, ապենդիցիտի ժամանակ (կույր աղիքի վորդակերպ հավելվածքի բորբոքում), խեղված աղեթափի ժամանակ, ծննդաբերությունը խանգարող փորի ուռեցքի առկայության ժամանակ, աղիքների վորորքի ժամանակ և այլն՝ ոպերացիա անելն անհրաժեշտ է: Հղիությունն ընդհատելու ռիսկն այնքան էլ մեծ չէ: Բայց և այնպես հղիությունը յերբեմն կարող է ընդհատվել: Ըստ վորում, յեթե շուտափույթ ոպերացիայի կարիք չկա, հարկավոր է հետաձգել այն. իսկ յեթե կարիք կա անհապաղ ոպերացիայի, ապա պետք է անմիջապես անել

այդ ոպերացիան: Վրոմանց այն յերկուդը, թե ոպերացիայից հետո մնացած սպին ծննդաբերության ժամանակ չի դիմանա ունքոցների հետևանքով՝ կճղվի, հիմք չունի: Հայտնի յեն դեպքեր, յերբ հղիության ընթացքում հարկ է յեղել յերկու անգամ փորահերձում կատարել, և հղիությունը չի խանգարվել ու ծննդաբերությունը կանոնավորապես շարունակվել է:

ԱԼԿՈՀՈԼԸ ՅԵՎ ԾԵԱԽՈՏԸ

Վերն արդեն ասված է, վոր այն կարծիքը, թե քարեջուրը բարերար ներգործություն ունի հղի և ծիծ տվող կնոջ վրա, նախապաշարմունք է: Ավելի ևս կորստաբեր է ընդհանրապես վորգելից ըմպելիքների գործածությունը, և առավել ևս՝ չափից ավելի գործածելը: Այս պետք է իմանա և՛ հղին և՛ այն կինը, վոր մայր լինելու յե պատրաստվում:

Վորգելից ըմպելիքների՝ թե հոր և թե մոր կողմից՝ շարարկումը կարող է կորստաբեր լինել լինելիք յերեխայի համար: Չի կարելի հարաբերություն ունենալ, յեթե մի կողմը կամ յերկու կողմն էլ խմած են. նրանցից յեղած սերունդը կարող է հիվանդոտ լինել: Կան ճշտիվ ստուգված շատ դեպքեր, յերբ

առողջ ծնողներին, վորոնք մինչև այդ ունեցել են միանգամայն առողջ զավակներ, խամած վիճակում հարաբերություն ունենալուց ծնվել են հիվանդ յերեխաներ, այսինքն ապուշներ, ընկնավորներ և այլն:

Վորպեսզի ավելի ակնբախ լինի չխմող ծնողների և գինեմոլ ծնողների միջև յեղած սուր տարբերությունն, առաջ բերենք այստեղ շվեյցարացի պրոֆեսորներից մեկի հետևյալ դիտմունքը: Նա հետազոտել է մոտավորապես հավասար թվով զավակների տեր՝ տասնութամյա չխմող ծնողների և տասնութամյա ծնողների հարբան ծնողների. առաջին ընտանիքների յերեխաների թիվն է 61, յերկրորդներինը՝ 57: Այդ հետազոտությունից պարզվել է, վոր առաջին ընտանիքներին պատկանող նորմալ յերեխաների թիվն 50 է, կամ 81,99%, յերկրորդներինը՝ միայն 10, կամ 17,5%: Զխրմող ընտանիքների 61 հատ յերեխայից վաղ հասակում մահացել են 5-ը, ներվային սխտեմի խանգարումով հիվանդ են յեղել 4-ը, բնածին թերություններ ունեցել են 2-ը: Հարբած ծնողների 57 յերեխաներից առաջին շաբաթների և ամիսների ընթացքում մահացել են 25-ը, տառապել են ապուշությունից 6-ը, ընկնավոր են 5-ը, վիտյան պարախտով

հիվանդ է 1-ը, տարբեր տեսակի խեղամրտություն և ֆիզիկական թերաճում ունեն 10-ը: Ահա թվեր, վորոնց մասին լրջորեն մտածել է հարկավոր:

Արդեն ասացինք, վոր ակոհոլը մոր կաթի հետ է փոխանցվում յերեխային: Բացի դրանից, մատնանշենք մի հանգամանք ևս. յերբեմն ակոհոլամոլների կանացի սերունդը վոչ միայն ինքն է կորցնում կերակրելու ընդունակությունն, այլ այնուհետև ևս նույնը ժառանգաբար մորից. աղջիկներին է փոխանցվում, նրանց ստինքներում կաթ չի լինում:

Ծիքանի խոսք ել պետք է ասել ծխախոտ ծխելու մասին: Ծխող հղի կինը, վոր պատրաստվում է մայր լինելու և ցանկություն ունի իր լինելիք յերեխային պահպանել ամեն ունի իր լինելիք յերեխային, պետք է վաղ անցնի ծխելու սովորությունից հղիության շրջանում, վորովհետև հազիվ թե պետք լինի ապացուցելու, թե ինչքան վնասակար է լինելու յերեխայի համար մնալ այն սինյակում, ուր ծխում են: Ծխախոտի ծխով յգված սննդակը թունավորող ներգործություն ունի յերեխայի որգանիվի վրա: Նրան վնասակար է նույնիսկ այն ծխոտ ողը, վոր մայրն է

արտաշնչում: Ծխելը հարկավոր է թողնել մի անգամից, թե չե նպատակին հասնելը դժվար կլինի:

ՀԼԻՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՐՏԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Վերն արդեն ասել ենք, վոր վոտքերի այտուց նկատվելուն պես հարկավոր է մեղը հետազոտել, վորպեսզի այտուցների պատճառն իմացվի: Այտուցների ամենահաճախ պատահող և լուրջ պատճառը յերիկամունքների հիվանդությունն է: Սակայն այտուցներ յերևան են գալիս նաև ուրիշ հիվանդությունների ժամանակ: Բացի յերիկամունքների բորբոքումից, նախ և առաջ պետք է նկատի ունենալ սրտի հիվանդությունը: Հղի կանանց՝ սրտից զանգատ անելը հաճախակի կրկնվող յերևույթներից է: Նման զանգատներն ավելի հաճախ են լինում հղիության յերկրորդ կեսում, վորովհետև այդ ժամանակ է, վոր աճող արգանդն սկսում է ճնշել սիրտը, մի բան, վորից առաջանում է շնչարգելություն ու սրտի բաբախում:

Հղիները չպետք է մոռանան, վոր թեև անհրաժեշտ է հղիության ժամանակ սիրտը

պահպանել, բայց և տյնպես հազվադեպ են այն որինակները, յերբ հիվանդ սրտի պատճառով անհաջող անցած լինեն ծննդաբերությունները և նույն պատճառով ընդհատված լինի հղիությունը: Զափազանց շատ են այն դեպքերը, յերբ նույնիսկ սրտի արատ ունեցող հղիները հաջող ծնում են բժշկի հսկողությամբ: Վտանգավոր են միայն սրտի ծանր տեսակի արատները, վորոնք, հղիության հենց առաջին ամիսներից, խանգարում են առաջ բերում նրա գործունեյության մեջ և բժշկվելու դեպքում ել կայուն արդյունքներ չեն տալիս: Սրտի այսպիսի տկարությունն ստիպում է ընդհատել հղիությունը, վորպեսզի հղի կնոջ կյանքը ուսկի չենթարկվի: Այսպիսի հիվանդները պետք է միշտ բժշկի աչալուրջ հսկողության տակ լինեն, վորպեսզի հղիությունը դադարեցնելու հարցը ժամանակին լուծվի:

ԳՈՆՈՐԵԱ (ՍՈՒՍԱՆԱԿ)


Հեշտոցի արտադատումները՝ ապարահները՝ լինում են տարբեր տեսակի: Յերբեմն նրանք միանգամայն անփսաս են, և կարիք չկա բժշկվելու: Իսկ յերբեմն նրանք լուրջ հիվանդության արդյուք լինելով պետք ունեն

բժշկության: Այս հիվանդություններից ամենածանրը գոնորեա-սուսանակն է կոչւոյ համար: Այս հիվանդությունը հետևանք է նույն հիվանդությամբ բռնված տղամարդու հետ հարաբերություն ունենալուց. նա շատ վտանգավոր է կոչւոյ համար, ուստի և անմիջապես պետք է բժշկի դիմել: Այս հիվանդությունը կարող է վտանգավոր հանդիսանալ և՛ հղի կնոջ և՛ նրա ապագա յերեխայի համար: Սուսանակային վարակը, վորը գտնվում է հեշտոցում և արգանդավզում, ծնողաբերությունից հետո կարող է արգանդի միջոցով արյան մեջ թափանցել ու ծնողկանի համար ծանր հետևանքներ առաջացնել: յեթե նույնիսկ մայրը զերծ մնա հետծննդաբերական բարդություններից, յերեխան ծնվելու պահին կարող է հիվանդանալ չափազանց վտանգավոր՝ կուրություն սպառնացող՝ աչքերի հիվանդությամբ, այն. ե՛՛ կուպերի սուսանակային բորբոքումով:

Թեև յերեխայի ծնվելուց հետո անմիջապես նրա աչքերի մեջ կաթեցնում են լապիսի (դժոխաքար), պրոտարգոլի կամ կոլարգոմի պրոֆիլակտիկ (ախտականխող) կաթիլներ, բայց վերոհիշյալ դեպքերում նրանք միշտ չեն ոգնում և, յերեխայի ծնվելուց հետո



Վերջանում է այսպես



Սկսվում է այսպես:

նկ. 7. Նորածին յերեխայի աչքերի բերանում (սուսանակային հիվանդություն):

• Բերանում — լորձաճորայնք. Ծան. բարձր:

շատ չանցած, կարող են առաջանալ կանաչավուն թարախային բավական առատ արտադատումներ՝ սովորաբար միայն մեկ աչքից, ինչքը կարմրում, ուռչում է, կոպերի լորձաթաղանթը բորբոքվում է, աչքը փակ է: Այս հիվանդությունը պետք է բժշկել ամենայնուանդուն կերպով: Յեթե բժշկությունն ըսկաված է ժամանակին և տարված է կանոնավոր յեղանակով, յերեխայի աչքերը կարող են փակվել: Բացի սրանից, հարկավոր է ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ, վորպեսզի ցավը մեկ աչքից մյուսին չանցնի:

Յեթե հղի կնոջ սուսանակը ժամանակին հայտաբերված է, և կինը հղիության շրջանում ինամքով բժշկվել է, ապա հետծննդաբերական շրջանն անցնում է առանց բարգոթյունների ծագելու, և յերեխան ծնվում է առողջ աչքերով:

Անհրաժեշտ է հիշատակել, վոր սուսանակով հնարավոր է վարակվել նաև արտասնական ճանապարհով (առանց յարաբերության). որինակ՝ սուսանակով հիվանդ ուրիշ կնոջ հեշտոցային ծայրապանակը սրսկման համար ոգտագործելիս, կամ այն սրբիչներն ու սովանները գործածելիս, վորոնք կեղտոտված են սուսանակային արտադատումներով և կամ

սուսանակով հիվանդ կնոջ հետ մի անկողնում պառկելիս և այլն:

Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս

Սիֆիլիսը, վորովամենից հաճախ վարակվում են սեռական հարաբերության ժամանակ, չափազանց վտանգավոր հիվանդություն է վոչ միայն հղի կնոջ, այլև նրա սերնդի համար: Դրա համար հղի կնոջ սիֆիլիսի վաղ հայտաբերումը և կտրուկ միջոցներով նրա բուժման ձեռնարկումն ահագին նշանակություն ունեն: Արտաքին նշաններ յեղած դեպքում սիֆիլիսի ախտաճանաչումը դժվար բան չէ: հագիվ է պատահում, վոր այս շրջանում սիֆիլիսի գոյությունը չնկատված մնա: Ինքը հիվանդն է, վոր ահամա ուշադրություն է դարձնում մաշկի վրա առաջացած փոփոխումներին, և բժիշկը, վորին նա դիմում է, հնարավորություն ունի դիագնոզն ուղիղ դնելու և բուժումն սկսելու: Ավելի վատ է, յեթե սիֆիլիսը թաքուն վիճակում է, առանց արտաքին նշանների, և բոլորովին նեղություն չի տալիս հղի կնոջը: Այսպիսի դեպքերում չափազանց կարևոր է, վոր սիֆիլիսի առկայությունն իմացվի հղիության առաջին ամիս

ներում: Սիֆիլիսի այսպիսի ձևը բժիշկներն ել չեն կարողանում մի անգամից վորոշել: Լինում են դեպքեր, յերբ հղիությունն ել, ծննդաբերությունն ել անցնում են առանց բարդությունների, այնինչ յերեխան ծնվում ե թույլ ու նվազ, խնամքը և բուժումը նրան չեն ոգնում: այսպիսի յերեխաները շատ հաճախ շուտ են մեռնում: Վերջապես ծնողները դիմում են բժշկի և իմանում, վոր սիֆիլիսի կասկած կա: Հետազոտման համար բժիշկը վերցնում ե հղի կնոջ արյունը, և շատ անգամ ճշտվում ե նրա յենթադրությունը: Մոր անմիջական յեռանդուն բուժումից հետո յերեխան ծնվում ե ավելի առողջ ու, համապատասխան բուժումից հետո, մնում ե վողջ: Դիտված են և այնպիսի դեպքեր, յերբ հաջորդապես, մեկը մյուսի յետևից, հղիությունները հանկարծ ընդհատվում են՝ առանց վորևե հայտնի պատճառի: Յերբ այսպիսի կինը դիմում ե բժշկի, դուրս ե գալիս, վոր նա թաքուն սիֆիլիս ունի, վորպիսի հանգամանքը հաստատվում ե նաև արյան հետազոտմամբ: Հաճախ լավ արդյունքներ ե տալիս՝ հղիության հենց առաջին ամիսներից յեռանդուն կերպով սկսված՝ հակասիֆիլիսային բու-

ժումը: Ծննդաբերությունը կատարվում ե ժամկետին, և ծնվում ե կենսունակ յերեխա: Վորպեսզի թաքուն սիֆիլիսի ախտաճանաչումը հնարավոր լինի ժամանակին կատարել, անհրաժեշտ ե, վոր բոլոր հղիներն անցկենան կանանց կոնսուլտացիայից հղիության առաջին իսկ ամիսներում, 2 — 2^{1/2} ամսվանից վոչ ուշ: Ավելի ուշ ժամկետներում ախտաճանաչումն այնքան վորոշ չե, ըստ վորում և բուժումն սկսվում ե ավելի ուշ:

Սիֆիլիսի ախտաճանաչման համար բարակ ասեղով արյուն են վերցնում յերակից: այդ գործողությունը համարյա անզգալի յե: Հետազոտման արդյունքի մասին լաբորատորիայի տված պատասխանը հասկանալ կարող ե միայն բժիշկը: Պատասխանի մեջ «խաչի» առկայությունը միշտ չի նշանակում, թե հիվանդությունը սիֆիլիս ե: այդ հարցը բժիշկն ե վորոշում: Կասկածելի դեպքերում արյունը վերցնում են յերկրորդ անգամ: Վարակման աղբյուրը գտնելու համար յերբեմն հարկ ե լինում վերցնել հղի կնոջ ամուսնու արյունը:

Սիֆիլիսով վարակվելու դեպքեր պատահում են նաև արտասեռական ճանապարհով: Հայտնի յեն դեպքեր, յերբ ամուսինները,

շրթունքների վրա աննկատելի սիֆիլիսային խոց ունեցող կնոջ հետ համբուրվելով, վարակվել են սիֆիլիսով և ապա, իրենց կնոջը համբուրելիս, վարակել են նաև նրան: Առաջին խոցը յերևացել է շրթունքների վրա: Սիֆիլիսի արտասեռական փոխանցում կարող է առաջանալ նաև այն ժամանակ, յերբ մի քանի հոգի ծխում են միևնույն ծխախոտը կամ չիբուխը փոխ փոխ, յերբ գործ են ածում ընդհանուր ամաններ, գդալներ, բաժակներ և այլն:

Սիֆիլիսը հարկավոր է բժշկել յերկար ժամանակ, ճշտությամբ կատարել բժշկի խորհուրդները և՛ արյան կրկնողական հետադոմամբ՝ պարբերաբար ստուգել բուժման արդյունքները: Արմատացած այն կարծիքը, թե սիֆիլիսն անբուժելի յե, ուղիղ չէ: Կանոնավոր ու տևական բուժմամբ սիֆիլիսը դառնում է բուժելի: Սրա ապացույցն այն է, վոր սիֆիլիս ունեցող հիվանդներից փմանք, սպեցիֆիկ (խտահատուկ) բուժումներն անելուց հետո, կրկին եյին հիվանդացել նոր սիֆիլիսով: Նշանակում է՝ նրանք բուրորովին բուժված եյին, վորովհետև սիֆիլիս ունեցողը չի կարող նոր սիֆիլիսով վարակվել: Հոյ կինը, վորի սիֆիլիսով հիվանդ լինելը հաստատված է, պետք է վորքան

կարելի յե շուտ բուժվել սկսի: Միայն այս դեպքում բժշկությունը կլինի ոգտակար, և վորքան վաղ սկսված լինի, այնքան լավ է: Ծննդաբերությունից հետո յել թե՛ մոր և թե՛ յերեխայի բժշկությունը շարունակվելու յե:

Ներկայումս, շնորհիվ վեներախտաբանական կոնսուլտացիաների և վենդիսպանսյորների ընդարձակ ցանցին, վոր ծավալված է ամբողջ ԽՍՀՄ-ում, սիֆիլիսի կանխումը և բուժումը տարվում են յեռանդուն կերպով ու այնքան ընդարձակ ծավալով, վոր սիֆիլիսով հիվանդանալու դեպքերն զգալապես պակասել են:

Վեներախտաբանական կոնսուլտացիան աշխատում է կանանց կոնսուլտացիայի հետ համատեղ ու նպաստում է թաքուն և հին սիֆիլիսի հայտնաբերմանը: Իր սեփական և իր ապագա սերնդի առողջությանը հոգատար յուրաքանչյուր հղի կին անպատճառ պետք է դիմի վեներախտաբան բժշկի (վեներոլոգի):

ՏՈՒՔՆԵՐԿՈՒԼՈՉ

Հղիների տուբերկուլոզը (բարակացավը), ինչպես և սիֆիլիսը, հատուկ դիտողության և ուշադրության առարկա յե լինելու: Տուբերկուլոզի դեմ պայքարը տար-

վում ե տուբերկուլոգային կոնսուլտացիաների և դիսպանսյորների միջոցով. պայքարի այս յեղանակը թե պրոֆիլակտիկ և թե բուժական բնույթ ե կրում:

Չափազանց կարևոր ե տուբերկուլոգով հայտնապես հիվանդ կնոջ հղիությունը ժամանակին վորոշելը, վորովհետև այդ դեպքում անհրաժեշտ ե լինում վորոշել մի լուրջ հարց՝ հարկավոր ե արդյոք ընդհատել հղիությունը, մոր առողջությունը և նույնիսկ կյանքը պահպանելու համար, թե հարկավոր ե թույլ տալ ծնել՝ առանց յերկուլո ունենալու, վոր դրանից կսաստկանա տուբերկուլոզի պրոցեսը: Այսպիսի հղի կնոջը մի վորք ժամանակ պետք ե հսկողության տակ պահել և հղիության աճը հայտնապես վատթարացնող մի քանի անսպաստ յերևույթներ նկատելիս, հղիությունն ընդհատելու անհրաժեշտության հարցը դնել: Մենակ այն հանգամանքը, թե հղի կինը տուբերկուլոզ ունի, հղիությունն ընդհատելու հիմք ծառայել չի կարող:

Հղի կանանց տուբերկուլոզը ժամանակին վորոշելը կարևոր ե, վորովհետև համապատասխան միջոցառումների շնորհիվ յերբեմն հաջողվում ե հղի կնոջ առողջությունը այնքան կազդուրել և բարելավել, վոր ծնված

յերեխան լավ ե զարգանում: Հաստատված ե, վոր յերեխաները տուբերկուլոզավոր չեն ծնվում, այլ հետո յեն հիվանդանում, վարակվելով իրենց տուբերկուլոզով հիվանդ ծնողներից, և առավելապես՝ մորից, ծիծ ուտելու շրջանում: Անհ ինչու կարևոր ե խստիվ հետևել այն միջոցառումներին, վորոնք պաշտպանում են յերեխային տուբերկուլոզով վարակվելուց:

Տուբերկուլոզով ակնհայտնի հիվանդ ծնողներից յերեխային պահպանելու համար ներկայումս ծնվելուց մի քանի որ անցած, յերեխային պատվաստում են (կամ կաթիլներ տալով մոր կաթի հետ, կամ մաշկի տակ ներարկելով): Բացի դրանից, այն ընդհանրացած կարծիքը, թե տուբերկուլոզն անբուժելի յե, ներկա ժամանակի համար ուղիղ չե: Տուբերկուլոզ ունեցող հիվանդներին բուժել կարելի յե, յեթե հիվանդությունը ժամանակին ե ճանաչված: Ինչքան վաղ սկսենք բուժել տուբերկուլոզով հիվանդ հղի կնոջը, այնքան ավելի շանս (հավանդ հղի կնոջը, այնքան ավելի շանս) կա, վոր նրա դրությունը վստականություն կա, վոր նրա դրությունը կլավանա, և նա չի վարակի իր յերեխային: Անհ ինչու համար անագին նշանակություն ունի մասնագետ տուբերկուլոզագետի ձեռ-

քով կատարված քննությունը հղիություն
առաջին ամիսներում:

Կանացի աշխատանքի՝ արտադրություն
մեջ լայն ներգրավման մասին կուսակցու-
թյան և կառավարության վորոշումները
հայտնի չեն: Մեր յերկրում արվում է ամեն
բան, վորպեսզի կնոջը հնարավորություն
տրվի և՛ մայրություն անել և արտադրության
մեջ աշխատել: Խորհրդային որենքներով հղի
կանանց վերապահված է հանգստություն՝
ծննդաբերությունից առաջ և հետո: Ընդամին
կին-ծառայողներն ստանում են վեց շաբաթ-
ական (42 օր) հանգիստ մինչև ծննդաբե-
րությունը և վեց շաբաթական հանգիստ
ծննդաբերությունից հետո, իսկ կին-բանվո-
րուհիները՝ ութը շաբաթական հանգիստ
(56 օր) մինչև ծննդաբերությունը և ութը շա-
բաթական (56 օր) ծննդաբերությունից հետո:

Ծանոթություն. Գյուղատնտեսական ար-
տելի նոր կանոնադրության 14-րդ կետի
համաձայն կոլտոհների հղի կանայք ազատ-
վում են ծննդաբերությունից մի ամիս առաջ
և մի ամիս հետո (հսք):

Արձակուրդ ստանալու համար հղի կինը
պետք է իր ժամանակին դիմի կոնսուլտա-

ցիա կամ ամբուլատորիա: Յեթե հղի կինը
իր նախածննդական արձակուրդի որերից
ուշ ծնի, ապա այդ ուշացման որերը չպետք
է դուրս գան հետծննդական արձակուրդի
համար սահմանված որերից. նույնպես, յեթե
կինը ծնի ժամկետից առաջ, ապա չոգտա-
գործված արձակուրդի որերը չեն ավելաց-
վում հետծննդաբերական արձակուրդի որերին:

Յեթե կինն իր հետծննդաբերական ար-
ձակուրդը լրացնելուց հետո իրեն հիվանդ է
զգում, նա կարող է ընդհանուր կարգով
արձակուրդ ստանալ հիվանդություն պատ-
ճառով: Յեթե պտուղը ծնվում է մեռած,
այդ հանգամանքը չի զրկում կնոջը հետծնն-
դաբերական արձակուրդի իրավունքից:

Վորքան շուտ կոնսուլտացիա գնա հղի
կինն, այնքան հեշտ կլինի բժշկին վորոշել
հղիության ժամկետը, վորով և ավելի փոքր
սխալ անել՝ արձակուրդը վոր որվանից
տալու նկատմամբ:

Շատ ձեռնարկություններում ոգնու-
թյունը հղի կանանց մոտեցնելու համար,
կազմակերպված են ՄՄՊ բժիշկները, Նրանք
հաշվառքի չեն վերցնում հղի բանվորուհի-
ներին. յեթե հարկավոր է, ոգնում են, վոր
ժանր աշխատանքն ավելի թեթևի փոխվի, և

առորյա բուժական ու պրոֆիլակտիկ ոգ-
նություն են հասցնում հղի կնոջը:

Բացի դրանից, ըստ բնակավայրերի, կոն-
սուլտացիաներում կան հովանավորող-քույ-
րեր, վորոնք այցելում են հղիների բնակա-
րանները, ծանոթանում են նրանց կենցաղին,
նրանց նիստուկացի և աշխատանքի պայ-
մաններին. համապատասխան խրատներ են
տալիս նրանց, թե ինչպես ե հարկավոր
նախապատրաստվել ծննդաբերության հա-
մար և տալիս են մերձակա ծննդախնա-
մական ինֆարկների հասցեները: Դրա հետ
միասին հովանավորող-քույրը մանրամասն ծա-
նոթացնում է հղի կնոջը՝ ինչ ե հարկավոր
պատրաստել լինելիք յերեխայի համար և
ինչպես ե պետք նրան կերակրել: Քույրը
գալիս ե այլևս մի քանի անգամ, վորպեսզի
համոզվի, թե ինչպես ե յուրացրել հղի
կինը նրա խրատները: Յերեխայի ծնվելուց
հետո քույրը նորից ե գալիս ստուգելու՝
արդյոք ամեն բան այնպես ե արվում, ինչ-
պես առաջուց ասված ե յեղել: Հղիների
այս պատրոնածը (հովանավորումը) թեթե-
վացնում ե յերեխայի կերակրման դժվարին
գործը:

Մայր-մանկան պահպանության պունկտե-

րում կան նաև իրավաբանական կոնսուլտա-
ցիաներ: Այս կոնսուլտացիայի վարիչն ե
սոցիալական-իրավական հարցերին գիտակ
իրավաբան. կոնսուլտացիան նպատակ ունի՝
պահպանել հղիների ու մայրերի իրավունքը
և աշխատանքն, ինչպես նաև պաշտպանել
նրանց այն բոլորից, վորոնք խախտում են
այս գործում որենքով նրանց վերապահված
իրավունքները: Իրավաբանական կոնսուլտա-
ցիան մոտիկից ծանոթանում ե իր կլինետ-
ների կենցաղին, մտնում ե նրանց կյանքի
բոլոր մանրամասնությունների մեջ, տալիս
ե իրավաբանական խորհուրդներ և անհրաժեշտ
դեպքերում յեղույթ ե ունենում դատարանում
ու պաշտպանում կնոջ շահերը:

Այս գրքույկում խոսվում ե շատ բանի
մասին, վոր պետք ե իմանա հղի կինը: Բայց
հղի կինը կարող ե ունենալ նաև մի շարք
այնպիսի հարցեր, վորոնց պատասխանն այս-
տեղ չի գտնի, վորովհետե սպառիչ պատաս-
խաններ տալ հղի կնոջ և մոր բոլոր հարցե-
րին անկարելի յե: Հետևաբար անհրաժեշտ
ե, վոր հղի կինը ճշտապահորեն հաճախի կոն-
սուլտացիան. այնտեղ կստանանա իրեն ան-
հանգստացնող բոլոր հարցերի պատասխանը:
Կոնսուլտացիան և ՄՄՊ-ի բջիջները — հղի
և նորածնի մոր լավագույն բարեկամներն են:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հղիութիւն	3
Կանացի սեռական որգանները	7
Կանացի ձվի բեղմնավորումը	13
Հղիութեան կապակցութեամբ կնոջ որգանիզմի կրած փոփոխումները	16
Ամսականների դադարումը	16
Կրծքի գեղձերի փոփոխումները	21
Մաշկի փոփոխումները	22
Արյան շրջանառութեան խանգարումները	23
Արյան շրջանառութեան մի քանի խանգարում ները	27
Պտուղի աճումից առաջացած արգանդի փո- փոխումները	30
Աճող արգանդի աղբեցութիւնը բարձրագիւր որգանների վրա	35
Ինչպես պետք է պահել իրեն հղի կինը	38
Հղի կնոջ ընդհանուր ուժի մը	38
Մահ գալիս թե՞ պառկել	42
Ֆիզիկական աշխատանքի և հղիութիւնը	45
Մաշկի և արտաքին սեռական որգանների խնամքը	47

Հղի կիներ պետք ունի արդյոք սրսկվելու	49
Մեզի հետազոտումը	53
Ստինքների խնամքը	56
Բերանի խոռոչի խնամքը	60
Մնունդը	61
Վռտնամանը	64
Հագուստը	65
Գուլպայակապերը	66
Բանդաժը	68
Հղի կիներ կարճ և արդյոք դեղեր ընդունել	71
Կարելի՞ է արդյոք հղի կնոջն ուղեբացիա անել	72
Ալկոհոլը և ծխախոտը	73
Հղիություն և հիվանդություններ	76
Սրտի հիվանդություն	76
Գոնորեա (սուսանակ)	77
Սիֆիլիս	81
Ցուբերկուլոզ	85

Отв. ред. Г. А. Потенц Пом. тех. ред. Д. М. Джиниблаян

Издание 267/4527 Объем 3 печ. листа. Статформат А6—105х148
Уполкрайлит 00-11419. Тираж 1000 экз. Заказ 2929 Сдано в набор
5/VI-1935 г. Подписано в печать 20/VI-1935 г.

Типография им. „Стачки 1902 года“ г. Ростов на Дону.

ՀՀ Ազգային գրադարան



NL0273039

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.
Цена 75 коп.

47124

3364

На армянском языке

А. М. ШУСТЕР

ГИГИЕНА БЕРЕМЕННОЙ
ЖЕНЩИНЫ

513.99

С-88
88

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО
Ростов н-Д., Буденновский пр., № 30

Գ Ր Ա Պ Ա Հ Ե Ս Ը
Ռոստով-Դոն, Մոսկովսկայա, № 30
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)